

ԱԶԳԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدة يومية سياسية وأدبية - النيرة المسؤولة - إنشاء درويشيان

1500 L.Ո. 74ԳԳ ՏԱՐԻ, ԹԻՒ 43 (20799) ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 30 ԱՊՐԻԼ 2001 10 ԷԶ

ՆԱԽԱԳԱՀ ՀԱՀՈՒՏ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐ Կ'ԱՅՑՑԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Նախագահ գործիչ Լևոն Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հրաւերին ընդառաջելով Զորեքշարթի, 2 Մայիսին պաշտօնական այցելութիւն մը պիտի տայ Երեւան:

Նախագահական պալատի տեղեկատուական գրասենեակը յայտարարեց, որ այս այցելութիւններուն նպատակը երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդումն ու Միջին Արեւելքի հարցերու քննարկումն է:

Նախագահ Լևոն Հայաստանի ընկերակցող պաշտօնական պատուիրակութեան մաս կը կազմեն փոխ վարչապետ Խամ Ֆարէս, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Զուհէյր Համսան, ընդհանուր ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն գործիչ Ժամիլ Սայէտ, նախագահական պալատի օրինական եւ վարչական հարցերու բաժանմունքի վարիչ Ֆարուք Քապլան, եւ մամուլի ու խմբագիրներու սենտիքաներու նախագահներ Մոհամէտ Պապալէքի եւ Մոհամէտ Քարամ: Հայաստանի մէջ Լիբանանի դեսպան Անթուան Պատուի Երեւանի մէջ պիտի միանայ պատուիրակութեան:

Շարք՝ էջ 9

ՍՈՒՐԻԱ ՅԱՐՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՊԻՏԻ ՀԱԿԱԴԱՐՁԷ ԻՍՐԱՅԷԼԻ

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ԺԱՐԷՆ

Սուրիա յայտարարեց, որ որոշած է հակադարձել Իսրայէլի՝ Լիբանանի մէջ սուրիական ռաւտարի մը ուժեղացումն համար:

Արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի, որ կը խօսէր ֆրանսացի իր պաշտօնակիցին՝ Իւպէր Վետրիւի հետ տեսակցութեան աւարտին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին, ըսաւ, որ Սուրիա յարմար պահուն պիտի հակադարձէ, որովհետեւ առիկա իր իրաւունքն է:

Շարէի աւելցուց, որ երբ Սուրիա հակադարձէ, պիտի չխախտէ ո՛չ միջապագային, ո՛չ ալ այլ օրէնքներ՝ ընտրելով իրեն համար յարմար նկատուող ժամանակը:

Շարէի դիտել տուաւ նաեւ, որ Իսրայէլ ինքնապալումի չէր դիմած, երբ սուրիական դիրքը ուժեղացեց Ապրիլ 16ին: Հետեւաբար, միջապագային ընտանիքը Սուրիայէն ինքնապալում պէտք չէ պահանջէ: Ան աւելցուց, որ ինքնապալումի եւ պատասխանատուութեան գիտակցութեան համար կատարուող կոչերը արդար չեն, որովհետեւ անոնք մէկ ուղղութեամբ կը կատարուին: Խօսելով Վետրիւի այցելութեան մասին, Շարէի ըսաւ, որ անիկա շինիչ էր ու արդիւնաւետ: Տեսակցութեան ընթացքին արծարծուած էր նաեւ նախագահ Պաշշար Ասատի Ֆրանսա այցելութեան ծրագիրը, որ տեղի պիտի ունենայ Յունիսի վերջաւորութեան: Վետրիւ իր կարգին անուղղակի կերպով քննադատեց Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնը, որ չափապանցուած ուժի գործածութեան կը դիմէ ճնշելու համար պաղեստինեան եօթնամեայ ըմբոստութիւնը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԸՆԴՀԱՆՍԸ 1990ԱՎԱՆ ԹՈՒԼԿԱՆՆԵՐՈՒՆ

ԼՂՀ ԲԱՆԱԿԸ ԱԻՆԵԼԻ ԼԱԻ ԶԻՆՈՒԱԾ Է

Կ'ԸՍԵ Ս. ՕՏԱՆԵԱՆ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան ըսաւ, որ Լեւոնային Ղարաբաղի բանակը ներկայիս աւելի յաւաստեցած է գինուած է, քան՝ 1990ականներուն:

Օհանեան ըսաւ, որ ԼՂՀ բանակը պատրաստ է պատասխանելու, եթէ պատերազմը վերսկսի: Ան մերժեց, թէ քաղաքական վերջին իրադարձութիւնները պատճառ դարձած են հանրութեան եւ բանակին միջեւ յարաբերութիւններու վատթարացման:

«Մենք պատերազմ չենք ուզեր: Տագնապին լուծման գործընթացը կը յառաջանայ: Կանխատեսելի է հարցին խաղող լուծումը մը բանակցութիւններու ընդմէջէն», ըսաւ ան: Սակայն Օհանեան նշեց. «Մենք պարտաւոր ենք պատերազմի պատրաստ ըլլալու: Հարցը պատերազմի միջոցով լուծելու մասին Ազդեցչականէն հասած կոչերը ինծի պարզապէս քաղաքական խաղեր կը թուին ըլլալ: Եթէ անոնք իրապէս այս կ'ուզեն, ապա հակազդեցութիւնը, որ անոնք պիտի ստանան բաւարար եւ իրենց յարմար պիտի ըլլայ»:

Ս. Օհանեանի համաձայն, ԼՂՀ յաջողած է լաւագոյն բանակներէն մէկը կազմել, որովհետեւ արցախացիները աշխարհի ամէնէն համբերատար, կարգապահ եւ կազմակերպուած ժողովուրդներէն են:

ԹՈՒՐԸԻՒ

ՔԱԿԻ 21 ԱՆԴԱՄՆԵՐ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԻՆ

Թրքական ոստիկանութիւնը ՔԱԿԻ 21 անդամներ ձերբակալած է անցնող շաբաթուան ընթացքին Թուրքիոյ հարաւարեւելեան գօտիին մէջ տեղի ունեցած շաբթ մը յարձակումներու պատճառով, յայտնած են պաշտօնատարներ Շաբաթ օր: Կասկածելիները ամբաստանուած են պինեալ արգիլուած խմբակի մը անդամ ըլլալու եւ «Թրքական կուսակցութեան ղեկավար Օճալարի կողմէ «խորամանկութիւն» յանցանքով: Թուրքիա կը մերժէ միակողմանի պինաղու մը, որուն կոչ ուղղած է ՔԱԿ, ըսելով, որ անիկա կուսակցութեան ղեկավար Ապտիլլա Օճալարի կողմէ «խորամանկութիւն» է՝ մահապատիժէ փրկուելու համար: Անիկա յայտարարած է, թէ պիտի բնաջնջէ ըմբոստները:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅԱՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ՍԱՍԿԱՑԱՆ

Այն պահուն երբ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ կը յայտարարէր, թէ Իսրայէլ ու պաղեստինցիները համաձայնած են պինաղու մը նստարկելու հետ շուրջ, Կապալի եւ Այսրյորդանանի մէջ բախումները թափ կը

ստանային:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս երէկ Գաիթիէ այցելեց՝ Եգիպտացի պաշտօնականներու հետ քննարկելու համար Այսրյորդանանի մէջ տական խաղաղու-

թեան նախաձեռնութեան մանրամասնութիւնները եւ փոխանցելու համար Իսրայէլի վերապահութիւնները անոնց մասին: Փերէս տեսակցութիւններ ունեցաւ նախագահ Հիւսնի Մուպարաբի եւ արտաքին գործոց նախարար Ամր Մուսայի հետ:

Տեսակցութիւններու աւարտին Փերէս ըսաւ, որ համաձայնութիւն գոյացած է կացութիւնը հակաընդդէմ տակառնելու ձեւերուն մասին, սակայն պինաղու մը չէ յայտարարուած: Փերէս աւելցուց, որ Իսրայէլ ձեռնարկած է միջոցառումներու անմիջապէս մեղմացնելու համար ճնշումը կապին եւ Այսրյորդանանի պաղեստինցիներուն վրայէն: Սակայն Փերէս ըսաւ, թէ Իսրայէլ ի՞նչ միջոցառումներ պիտի որդեգրէ մեղմացնելու համար շրջափակումը: Փերէսի հետ տեսակցութեան աւարտին, Մուպարաբ յայ-

Շարք՝ էջ 9

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԼԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԹՈՒՐԸԻՈՅ ԵՒ ԱՋՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԽՈՐՀՐԴԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՆԿԱՐԵԼԻ

Կ'ԸՍԵ Վ. ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան ըսաւ, որ ներկայիս անկարելի է Հայաստանի, Ակրպէյճանի եւ Թուրքիոյ միջեւ եռակողմանի խորհրդակցութիւններ կազմակերպել շրջանային հարցերու վերաբերեալ:

Մեկնաբանելով նմանօրինակ եռակողմանի խորհրդակցութեան կազմակերպման մասին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձեմի առաջարկը, Օսկանեան ըսաւ, որ անիկա ապարդիւն պիտի ըլլայ այն պայմաններուն մէջ, երբ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ չկան, Թուրքիա կը շարունակէ Հայաստանի շրջափակումը եւ Անգարա կ'որդեգրէ յստակ պրպէյճանաւետ քաղաքականութիւն: Ան ըսաւ, որ հայ-թրքական յարաբերութիւնները ներկայիս կրնային բացարձակապէս այլ մակարդակի մը վրայ ըլլալ, եթէ Անգարա Հայաստանի նկատմամբ 1991-92ի սխալ քաղաքականութիւնը չորդեգրէր:

Շարք՝ էջ 10

ENCYCLOPEDIA AMERICANA



30 Volumes	30 ԷՍՏՈՐ
31.000.000 Words	31,000,000 ՔԱՈ
The Largest Encyclopedia in the World	ԱՅԽԱՐԴԻ ԱՍԵՆԱԸՆԴԱՐԱԿ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆԸ
Down payment 10 \$ + Gift	ԿԱՆԽԱՎՃԱՐ 10 \$ + ՆՈՒԲԵՐ
Credit facilities Starting 1 - 6 - 2001	ՄԱՍՆԱՎՃԱՐ ԴԻՐՈՒԹԻՒՆ 1 - 6 - 2001ԷՆ ՍԿՍԵԱԼ
International Publishers 01/200772 - 01/321926 - 03/322681 - 03/688311	

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

REMEMBRANCE AND DENIAL: THE CASE OF THE ARMENIAN GENOCIDE

Կը բանախօսէ՝

ԴՈԿՏ. ՌԻՉԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
(ՄՇԼԻ մէջ պատմութեան դասախօս եւ
Հայագիտական Ամպիոնի վարիչ)

Տեղի կ'ունենայ Երկու շաբթի, 30 Ապրիլ, Երեկոյեան 8:00ին, «Ալեքսանտր» պանդոկին մէջ:

ՄՈՒՏՔԸ ԱՁԱՏ

ՊԵՏՔ Է ԴԱՍԵՐ ՔԱՂԵՆՔ ՄԵՐ ՍԽԱԼՆԵՐԷՆ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՂԱՐԵԱՆ

Հայաստանի մէջ Համաշխարհային Դրամատան միայնակ ներկայացուցիչ Օուէյս Սատաթ յայտնեց, որ Հայաստան պէտք է դասեր առնէ ելեկտրականութեան բաշխիչ ցանցերու սեփականաշնորհման փորձին ձախողութենէն եւ պէտք է արագացնէ բարեկարգումները, որպէսզի կարենայ գրաւել օտար ներգործողները:

«Ռոյթթըր» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին, Սատաթ, անդրադառնալով յիշեալ սեփականաշնորհման գործընթացին, ըսաւ, որ գործարքի փաստաթուղթերուն մէջ յստակօրէն իրարու յարակից արգելքներ գոյութիւն ունէին: «Կառավարութիւնը գիտէ անոնց մասին եւ կը կարծեմ, որ կան զրակայն որոշ դասեր, որոնցմէ պէտք է սորվիլ», ըսաւ ան:

Շարք՝ էջ 9

ԹՐԲԱԽՈՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՎԵՐԱԺՈՂՈՎԻՆ ՉԷ ԱՐԾԱՐԾՈՒԱԾ ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Թուրքիոյ եւ Ակրպէյճանի նախագահներ Ահմետ Նեճմէթ Սեպեր եւ Հայտար Ալիէ Ուրբաթ օր Պոլսոյ մէջ թրքական պետութիւններու վեհաժողովի շրջագիծին մէջ ունեցան հանդիպում մը:

Սեպեր եւ Ալիէ քննարկեցին Պաքո- ձեյիան քարիղատարի կառուցման առնչուող հարցեր եւ կարելու նկատեցին ծրագրի իրագործման արագացումը: Անոնք քննարկեցին նաեւ Լեւոնային Ղարաբաղի հարցի լուծման մասին Քի Ուէյթի բանակցութիւններու արդիւնքները:

Նոյն օրը վեհաժողովի աւարտէն ետք նախագահներու տուած մամուլի միացեալ ասուլիսի ընթացքին Ղապախտանի նախագահ Նուրուլթան Նապարպաեւ պատասխանելով հարցումի

Շարք՝ էջ 9

ԸՍՏ «ԹԸՐԸԻՇ ՏԷՅԼԻ ՆԻՈՒԶ»Ի

ՔԱՆԱՏԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԵՐԺԱԾ Է ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵԼԸ

«Թրքիշ Տէյի Նիուզ» թերթը կը հաղորդէ, որ Քապախտանի խորհրդարանը իր Հինգշաբթի օրուան նիստին մերժած է քննարկել Հայկական Ցեղասպանութեան մասին ներկայացուած բանաձեւը:

Բանաձեւը ներկայացուած էր Ազատական Կուսակցութեան երեսփոխան Սարգիս Ասատուրեանի կողմէ, սակայն ան բացակայած է յիշեալ նիստէն: Հետեւաբար բանաձեւը դուրս դրուած է օրակարգէն:

Այլ պատգամաւորներ նմանօրինակ բանաձեւեր

Շարք՝ էջ 9

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

ԱՊՐԻԼ 24Ի ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԱԶԴԱԿ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ



Կը պարունակէ նաեւ հետեւեալ թղթածրարները.

- Ֆրանսայի Ազգային Ժողովին 18 Յունուար 2001ի ամբողջական արձանագրութիւնները:
- Հայ մշակութիւնի աներումը - Վերջին վկայները բռնադատեալ հայրենիքի մը իսկական տէրերուն:
- 1915-1921. Հայութեան դաժան գոյամարտը:
- Մեծ Եղեռնին վերապրած հայ տարագիրներուն կրիկկա վերադարձը եւ երկրորդ բռնագաղթը:

248 էջ, գին՝ 5000 Լ.Ո.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՆԴԱՂ ԿԸՆԹԱՆԱՅ

Կ'ԸՍԵ ՀԸԼՈՒ

Պետական նախարար Փիեռ Հըլու Շաբաթ օր ձայնասփռում հարցազրույցի մը մէջ ըսաւ, որ քաղաքական որոշումները նախարարաց խորհուրդէն դուրս կ'առնուին, եւ կառավարութեան աշխատանքը դանդաղ կ'ընթանայ:

Միջնախարարական պօրակցութիւնն ու նախարարի մը անձնական կարծիքի արտայայտութիւնը տարբեր բաներ են. դիտել տուաւ Հըլու, յայտնելով, որ իշխանութեան երեք պետերուն միջեւ գոյացած համաձայնութենէ մը ետք նախարարաց խորհուրդը առանց քննարկումի կու տայ որոշումը, այսինքն՝ իշխանութեան եռեակի որոշութիւնը առկայ է:

«Վերջին հինգ ամիսներուն անհամար յանձնախումբեր կազմուեցան, եւ անոնց աշխատանքը շատ դանդաղ կ'ընթանայ», ըսաւ Հըլու:

Նախարարը յիշեցուց, որ Թաէֆի համաձայնութիւնը պատերազմին վերջ դնող միակ տարազն էր եւ վայն ընդունած են մարոնիներու Սֆէյր պատրիարքը, Սամիր Ժաիժաի, եւ նոյնիսկ Տանի Շամուն, եւ միակ ընդդիմացող մնացած էր Վօր. Միշէլ Աուն՝ անձնական պատճառներով: Այնուհանդերձ, ո'չ յաղթական, ո'չ պարտուածի այդ տարազը որդեգրուեցաւ բայց պետութիւնը այդ թուականէն ապրին այս տարազը զգալի չդարձուց քրիստոնեաներուն, այլ խտրական վերաբերում ունեցաւ:

Սուրիական ներկայութեան հարցով՝ Հըլու ըսաւ, որ սիւննի եւ շիի համայնքներուն ներկայացուցիչները եւ անոնց տեսակետը յստակ է, բայց քրիստոնեաներու դեկավարութիւնը յստակ չէ, այլ նկատելի է Սֆէյր պատրիարքի ժողովրդականութիւնն ու ներկայացուցչական հանգամանքը, հետեւաբար անո'ր հետ պէտք է կատարուի երկխօսութիւնը: Ան կոչ ուղղեց քաղաքական եւ տնտեսական հաւասարակշռուած յարաբերութիւններ ունենալու Սուրիոյ հետ:

Հըլու յիշեցուց, որ վարչապետ Ռաֆիք Հարիրի տնտեսական քաղաքականութիւնները քննադատած է անցեալին, բայց անիկա միջազգային հեղինակութիւն է եւ կարեւոր կապեր ունի. եւ այդ կապերը կ'օգտագործէ եւ իր կարելին կ'ընէ լուծելու երկրի տնտեսական դժուարութիւնները:

«ԱՁԴԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

● Հրայր Գասապեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Կարօ Գոճայեան 50,000 լ. ո. Տէր եւ տիկին Կարպիս Զիլինկիրեան 50,000 լ. ո. Տէր եւ տիկին Ռաֆֆի Զիլինկիրեան 50,000 լ. ո.

Կազմակերպութեամբ՝
ԱՁԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Հովանաւորութեամբ՝
ԳԵՐ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

ԱՏԱՆԱՅԻ ՏՈՀՄԻԿ ԵՐԵԿՈՅ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 30 Ապրիլ 2001, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ. Ազգ. Արքայեան վարժարանի հանդիսարանին մէջ:

ՄԱՀԱՁԴ

Տիկին Մարուսիա Կիւլպէնկ
Կիւլպէնկ Կիւլպէնկ եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժիլպէր եւ Քրիսթին Թոմա եւ զաւակունք

Տիկին Մարիան Հաթթար եւ զաւակունք
Կիւլպէնկ ընտանիք
Բրուտեան ընտանիք
Գասապ ընտանիք
Թոմա ընտանիք
Հաթթար ընտանիք
Տարագճեան ընտանիք
Գասապեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ԺԱՆ ԿԻԻԼՊԵՆԿ ԿԻԻԼՊԵՆԿԻ (Ծնեալ՝ Կեսարիա, 1910ին)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 27 Ապրիլ 2001, առաւօտեան ժամը 7:30ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 28 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
● Յատկացութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մթայլէպ, Ս. Եղիա (St. Elie) եկեղեցւոյ դիմաց, «Սամիր Պուրոս» շէնք, 3րդ յարկ, Երկուշաբթի 30 Ապրիլին:

ՀԱՐԻՐԻ ԱՆԱՆԻ ՀԵՏ ԲՆՆԱՐԿԵՑ ՄԻՋԻՆ ԱՐԵԷԼԵԻ ԵՒ ՀԱՐԱԲԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԶԱՐԿԱՑՈՒՄՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Շաբաթ օր ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ քննարկեց Միջին Արեւելքի եւ հարաւային Լիբանանի վարգացումները: Հանդիպումին ան ընդգծեց, որ Սուրիոյ հաստատումով Մաւարիի Շրպպան իրաւանեան հող է, եւ Լիբանանի պիտի աշխատի վերատիրանալու իր հողին:

Անան Հարիրիի հաւատեց, որ ՄԱԿի խաղաղարար ուժերը պիտի մնան հարաւային Լիբանանի մէջ: Ան անգամ մը եւս պահանջեց, որ իրանեան բանակը տարածի հարաւի մէջ:

Պատասխանելով թղթակիցներու այն հարցումին, թէ Անանի այս պահանջին պիտի ընդառաջե՞, Հարիրի ըսաւ, որ անոր տուած է իր պատասխանը:

Նշեց, որ վարչապետ Հարիրի Շաբաթ օր հեռաձայնեց Մեուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Ալիլի, որուն հետ քննարկեց շրջանային վարգացումները:

ԴԵՊԻ ԲԱՆԱՏԱ

Վարչապետ Հարիրի Շաբաթ օր ելրափակեց Միացեալ Նահանգներ իր այցելութիւնը: Ան Ուաշինկթոնի մէջ Միացեալ Նահանգներու նախագահ Ջորձ Պուշի եւ քարձրաստիճանի պաշտօնատարներու հետ

իր ունեցած հանդիպումներէն ետք ուղղուեցաւ դէպի Նիւ Եորք, ուր տեսակցութիւն մը ունեցաւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ: Տեսակցութեան ներկայ գտնուեցան հարաւային Լիբանանի մէջ Անանի անձնական ներկայացուցիչ Սթեֆան Տէ Միսթուրա եւ Հարիրիի ընկերակցող նախարարական պատուիրակութիւնը:

Վարչապետ Հարիրի երէկ յիտմիջօրէին ուղղուեցաւ Օթաւա, ուր երկօրեայ այցելութեան մը ընթացքին տեսակցութիւն մը պիտի ունենայ Քանադայի իր պաշտօնակից Ժան Քրեթիէնի հետ, քննարկելու համար երկկողմանի յարաբերութիւններն ու գործակցութեան վարգացման ծրագիրները:

Հարիրի իր շրջապատը պիտի ելրափակէ վաղը՝ երեքշաբթի, այցելութիւն մը տալէ ետք Փարիզ, ուր պիտի տեսակցի Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի եւ արտաքին գործոց նախարար Իւպէր Վետրիի հետ:

ՀԻԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան գործավար Տէյվիտ յայտարարեց, որ ամերիկացի պաշտօնատարները հետաքրքրութեամբ եւ ուշադ-

ԹԵԹԵԻ ԵՐԿՐԱՇԱՐԺ ՄԸ՝ ՊԵՔԱՅԻ ՄԷՋ

Թեթեւ երկրաշարժ մը երէկ յետմիջօրէին ցնցեց Պեքսան: «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ քաղաքացիներ կարծած են, որ վօրաւոր պայթում մը պատահած է: Նաեւ հաղորդուեցաւ, որ թեթեւ վնասներ կրած են հին շէնքեր:

Աւելի ուշ հաղորդուեցաւ, որ շարժը ունէր 4,1 ռիխթըր ուժգնութիւն:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ ԵՆ

ENJOY YOUR WORDBOOK Հայերէն-Անգլերէն-Արաբերէն

ԵՆ

J'AI ME MON DICTIONNAIRE Հայերէն-Ֆրանսերէն-Արաբերէն

ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԳՈՒՆԱՒՈՐ
ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱԳԻՐՔԵՐ
Գին՝ 10 000 լ.ո.
Ստանալու համար դիմել՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐ
իջպէս Գաբի
Librairie: Antoine, Mouawad, Gaby, Jabbour, Alam, Ideale

ՄԱՀԱՁԴ

Տիկին Աստղիկ Գասապեան եւ զաւակը՝ Վարդիվառ Տէր եւ տիկին Վազգէն Գասապեան եւ զուստոր

Տէր եւ տիկին Հրաչ Վարժապետեան
Տէր եւ տիկին Մատթէոս Գասապեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Տեմիրճեան եւ զաւակունք
Տիկին Զարուհի Աւագեան
Տէր եւ տիկին Կարօ Աւագեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սահակ Աւագեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վարուժ Արրահմեան եւ զաւակունք
Գասապեան ընտանիք
Վարժապետեան ընտանիք
Յարութիւնեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային, աներոյ, քեռայրին եւ հարազատին՝

ՀՐԱՅՐ ԳԱՍԱՊԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 27 Ապրիլ 2001ին, Ժեճթաուի հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 28 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՍՖԵՅՐ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ՓՏԱԾՈՒԹԻՒՆԸ

Մարոնիներու Պուրոս Սֆէյր պատրիարքը երէկ արտասանած իր քարոյին մէջ վեր առաւ կրթութեան եւ դաստիարակութեան կարեւորութիւնը հայրենիքի կերտումին եւ վերականգնումին համար, քննադատելով փտածութիւնը, ինչպէս նաեւ՝ պետական կառոյցներու վիճակը:

Երէկուան պատարագէն ետք իր ընդունած ժողովրդային պատուիրակութիւններուն Սֆէյր յոյս յայտնեց, որ Լիբանան կը վերատիրանայ իր անկախութեան, գերիշխանութեան եւ ազատութեան, հաւաստելով, որ պիտի շարունակէ պահանջել ամէն պետութեան իրաւունքը հանդիսացող այս տուեալները, առանց մէկու մը նեղութիւն պատճառելու դիտարութեան: «Այս պահանջը չի նշանակեր, որ Լիբանան պէտք չէ մասնաշատուկ յարաբերութիւններ ունենայ կարգ մը պետութիւններու եւ յատկապէս՝ Սուրիոյ հետ, բայց թէ՛ լիբանանցիները, թէ՛ ալ սուրիացիները պէտք է վարեն իրենց երկրին գործերը եւ ազատ ու ժողովրդավարական ընտրութիւններով իշխանութեան հասցընեն իրենց ցանկացած թեկնածուները», նշեց ան:

ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուծուած 11 քաղաքապետութիւններու քաղաքապետական խորհուրդներու մասնակի ընտրութիւններ կատարուեցան երէկ:

Ներքին գործոց եւ գիւղական ու քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըր հետեւեցաւ ընտրութիւններու ընթացքին եւ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն մէջ գոհունակութիւն յայտնեց վարչական եւ ապահովական նախապատրաստութիւններուն շնորհիւ ընտրութեանց լաւ ընթացքին համար: Ան նաեւ յայտնեց, որ հարաւի ազատագրուած շրջաններուն մէջ քաղաքապետական ու թաղապետական ընտրութիւնները պիտի կատարուին Սեպտեմբերին:

Մըր յայտնեց, որ աշխատանք կը տարուի պատրաստելու երեսփոխանական ընտրութեանց արդիական օրէնք մը, որ ոչ մէկը կ'իրաւապրէ, իսկ քաղաքապետութեանց նոր օրէնքը լայն իրաւասութիւններ պիտի տայ քաղաքապետական խորհուրդներուն:

Նշեց, որ լուծուած 11 քաղաքապետական խորհուրդներու 132 անդամներուն համար կը մրցեն 270 թեկնածուներ. Սուլթան Եազուպի քաղաքապետութեան մէջ քուէարկութիւն չկատարուեցաւ մրցակիցներու չգոյութեան պատճառով: Ընտրութիւններ կատարուեցան Պսապայի (Շուֆ), Ֆանարի (Մէթն), Ապրիինի (Քուրա), Հիսայի, Թիքրիթի եւ Պիրայի (Աքքար), Պրքսմայայի (Պաթրուն), Սիրի (Տընիէ), Ռաշայի եւ Քաուքապայի (Ռաշայա) մէջ:

ԾԱԽՈՒ ԶԵԵՂ ՅԱՐԿԱՐԱԺԻՆԵՐ

● Ֆարայայի մէջ, չինութեան աւարտին մօտ, 125 քառ. մէթր, 2 մնջատենակ, հիւրարահ, ճաշարահ, խոհանոց եւ զոյգ բաղնիք, լողաւազան, թեմիս խաղաղալար, piano bar, մարգարան, փիմկ - փոմկ, պիլիար, կառատուն եւ մեծ պարտեզ: Դիմել՝ երկրաչափ Անտոն Զուրդեանին, հեռ. 03-507657:

ԳՐԱԲՈՒԱԾ ՕՐ

23 ՄԱՅԻՍ 2001
ԱՁԳ. ԼԵԴՈՆ ԵՒ
ՍՈՖԻԱ
ՅԱԿՈՐԵԱՆ
ՔՈԼԵԴ
ՏԻԿԱՆՆՅ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍԵՐ ՅԱՐՄԱՐ ԳԻՆԵՐՈԿ

● Հեռաձայնել 03-506007 թիւին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Վարդանուշ Միւսեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Արա եւ Վերա Սիւսեան 30,000 լ. ո., տէր եւ տիկին Նեպիլ եւ Քնարիկ Սթաֆ եւ զաւակունք 50,000 լ. ո., տիկին Մարիամ Պոյաճեան եւ ընտանիք 100 \$, տէր եւ տիկին Սիմոն Գալթանեան 50,000 լ. ո. եւ Նուպար Մանկասարեան եւ ընտանիք 20,000 լ. ո. ԼՕԽԻ Երջանային վարչութեան:

THE CULTURAL HOUR
@
HAIGAZIAN UNIVERSITY
invites you to a lecture
on
Black Angel: The Life of Arshile Gorky
by
Nouritza Matossian
Thursday May 3, 2001 – 7 p. m.
Haigazian University Auditorium – Kantari

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Պարոյր Հացագործեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Զաւէն Թորոսեան 20,000 լ. ո., տիկին Ալիս Մարգարեան 30 \$, ԼՕԽԻ «Աստղիկ» մասնաճիւղին:

ՆՇԱՆԱԽՈՒԹԻՒՆ

ՄԵԹՐ ՍԻԺԱՆ
ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
ԸՆԴ
ԱՐՇԱԿ
ԿՈԿՈՆԵԱՆ

Ուրբաթ. 27 Ապրիլ 2001

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

● Սար Եուսէֆ հիւանդանոցի փողոց, Պաուշի Դաճաշ, 140 քառ. մէթր տարածութիւն, լաւ դիրք: Հեռ. 01-899718:

ԲԱԽՏԱԲՈՐՈՒԱԾ

Տէր եւ տիկին
Զարեհ եւ Մարալ
Պոյաճեան
բախտաւորուած են
մանչ զաւակով մը՝
ՔՐԻՍՏՈՅՐ
25 Ապրիլ 2001

ԵՐԿՈՒ ՎԵՅԱՓԱՌ ԶԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ ՏԵՐ ԶՕՐ

Երկուշաբթի, 30 Ապրիլի երեկոյեան ժամը 9:00ին, «Էյ. Թի. Էւն» պատկերասփիւռի հայկական կայանէն դիտեցեք 24 Ապրիլին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին միասնաբար կատարած ուխտագնացութիւնը դէպի Տէր Զօր:

ՈՒԹ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ
ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ԵՏԶԸ
ՄԱԿԵԴՈՆԻԱ ՅԱԻԵԼԵԱԼ
ԶԻՆՈՒՈՐՆԵՐ
ԿԸ ՂՐԿԷ ՔՈՍՈՎՈՅԻ
ՄՕՏ ՇՐՋԱՆ ՄԸ

ՍՔՈՓԻՒ, 29 (ՌՈՅԹԸՐԶ).- Մակեդոնիա Կիրակի օր յաւելեալ ուժեր զրկած է Քոսովոյի մօտ վայր մը, իր ապահովութեան ուժերէն 8 անդամներու սպանու- թենէն ետք՝ մէկ ամսուան մէջ առաջին յուրը բիրտ գէպքի մը ընթացքին:

Ըստ պաշտօնատարներու, հիւսիսարեւմտեան շրջանին մէջ Վեյչէ գիւղին մօտ «ծայրայեղականներ» Շարաթ օր թակարդ մը յարած են բանակային եւ ոս- տիկան միացեալ ուժերու դէմ:

8 զոհերու կողքին, 6 ուրիշներ վիրաւորուած են: Ասիկա մէկ դէպքի ընթացքին զոհերու ամէնէն մեծ թիւն էր՝ Փետրուարին ապահովութեան ուժերուն եւ ըմբոստներու միջեւ ծայր տուած տագնապէն ի վեր: ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպըրթ- սըն յայտնած է, թէ վայրագ արարքները որեւէ ար- դիւնքի պիտի չյանգին:

Ան աւելցուցած է, թէ ՕԹԱՆեան գլխաւորու- թեամբ ՔէՅՅՅՕՐ խաղաղարար ուժերը իրենց կարե- լին կ'ընեն՝ Քոսովոյի հետ սահմանը ապահովելու հա- մար:

Մակեդոնիոյ ոստիկանութեան բարձրաստիճան մէկ անդամը յայտնած է, թէ արդէն իսկ յստակ էր, թէ վերջերս հաստատուած խաղաղութիւնը տագնա- պին մնալուն վերջ մը չի նշանակեր:

Տագնապը պայթեանեան նոր պատերազմի մը բռնկումին զծով մտավախութեանց դուռ բացած էր:

ԻՐԱՆ

ԶԱՓԱՌՈՐԱԿԱՆՆԵՐ
Կ'ԱՄԲԱՍՏԱՆՈՒՆ
ԴԱԻԱՃԱՆՈՒԹԵԱՄԲ

ԹԵՀՐԱՆ, 29 (ՌՈՅԹԸՐԶ).- Իրանի յեղափո- խական ատեանը վերջերս ձերբակալուած քա- նի մը տասնեակ այլախոհները կ'ամբաստանէ հակախլամական գործունէութիւն կատարած եւ օտար դիւանագէտներու հետ գաղտնի կա- պեր հաստատած ըլլալու յանցանքով:

Ատեանին կողմէ հրապարակուած յայտա- բարուրիւնը կը նշէր, որ կարգ մը ձերբակալ- ւածներուն առաքելութիւնն էր տկարացնել ուսանողներուն եւ երիտասարդութեան հա-ւաւորը իսլամական սկզբունքներուն եւ կրօն- քին հանդէպ: Յայտարարութիւնը վերստին կը հաստատէր, որ բանտարկեալներէն ոմանք խոստովանած են, թէ կը դաւէին տապալելու համար Իրանի իսլամական կառոյցը:

Զար.՝ էջ 10

ՊԱՊԸ Կ'ԱՂՕԹԻ ԻՐԱՔԻ ՀԱՄԱՐ

Յովհաննէս Պօղոս Բ. պապը Շարաթ օր ընդունեց վատիկանի մէջ Իրաքի նոր դեսպանը, որուն յայտ- նեց, թէ ամէն օր կ'աղօթէ Իրաքի համար եւ կը փա- փաքէ, որ միջազգային անպարկոյն շուտով վերցուի:

Պապը բաւե նաեւ, որ կոչ կ'ուղղէ միջազգային ըն- տանիքին, որ ջնջէ պատժամիջոցները, որոնք օրական անմեղ զոհեր կը խլեն: Պապը դիտել տուաւ սակայն, որ բոլոր երկիրներն ալ պէտք է յարգեն իրենց կրօ- նական փոքրամասնութիւնները: «Իրաքի մէջ ե'ւս քրիստոնեաներուն եւ իսլամներուն միջեւ տիրուկը ամէն ժամանակէ աւելի անհրաժեշտ կը նկատուի հի- մա», շեշտեց պապը դեսպան Ապտէլ Ամրի Ապարիլի: Ան աւելցուց, որ ամէն կառավարութեան պարտակա- նութիւնն է երաշխաւորել, որ իր բոլոր քաղաքացի- ները հաւասար են իրարու: Իրաքի մէջ գոյութիւն ու- նի կաթողիկէ փոքրամասնութիւն մը:

Միւս կողմէ, Իրաք Շարաթ օր յայտնեց, որ բրի- տանական ու ամերիկեան օդանաւերը երկիրին հա- րաւային շրջանները ռմբակոծեցին՝ մէկ գոհ եւ եր- կու վիրաւոր պատճառելով: Բրիտանիա սակայն հեր- քեց ռմբակոծումի լուրը:

Իրաքցի զինուորական բանրեր մը ըսաւ, որ օդա- նաւերը ռմբակոծած են Նաժաֆ նահանգը ու ապա՝ վերադարձած Սէւտական Արաբիա եւ Քուէյթ, ուր- կէ թռիչք առած էին:

Շար.՝ էջ 10

ՊԱՊԸ Կ'ԱՂՕԹԻ ԻՐԱՔԻ ՀԱՄԱՐ

Յովհաննէս Պօղոս Բ. պապը Շարաթ օր ընդունեց վատիկանի մէջ Իրաքի նոր դեսպանը, որուն յայտ- նեց, թէ ամէն օր կ'աղօթէ Իրաքի համար եւ կը փա- փաքէ, որ միջազգային անպարկոյն շուտով վերցուի:

Պապը բաւե նաեւ, որ կոչ կ'ուղղէ միջազգային ըն- տանիքին, որ ջնջէ պատժամիջոցները, որոնք օրական անմեղ զոհեր կը խլեն: Պապը դիտել տուաւ սակայն, որ բոլոր երկիրներն ալ պէտք է յարգեն իրենց կրօ- նական փոքրամասնութիւնները: «Իրաքի մէջ ե'ւս քրիստոնեաներուն եւ իսլամներուն միջեւ տիրուկը ամէն ժամանակէ աւելի անհրաժեշտ կը նկատուի հի- մա», շեշտեց պապը դեսպան Ապտէլ Ամրի Ապարիլի: Ան աւելցուց, որ ամէն կառավարութեան պարտակա- նութիւնն է երաշխաւորել, որ իր բոլոր քաղաքացի- ները հաւասար են իրարու: Իրաքի մէջ գոյութիւն ու- նի կաթողիկէ փոքրամասնութիւն մը:

Միւս կողմէ, Իրաք Շարաթ օր յայտնեց, որ բրի- տանական ու ամերիկեան օդանաւերը երկիրին հա- րաւային շրջանները ռմբակոծեցին՝ մէկ գոհ եւ եր- կու վիրաւոր պատճառելով: Բրիտանիա սակայն հեր- քեց ռմբակոծումի լուրը:

Իրաքցի զինուորական բանրեր մը ըսաւ, որ օդա- նաւերը ռմբակոծած են Նաժաֆ նահանգը ու ապա՝ վերադարձած Սէւտական Արաբիա եւ Քուէյթ, ուր- կէ թռիչք առած էին:

ԱՅՆԻԼ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ
ԱՊԱՇՏԱՊԱՐՈՒԹԻՒՆ

ԱՅՃԻԼԻ ԱՌԱԿԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւանդանոցային ապահովագրութեան հետ կը ստանաս

- ❖100.000 ամերիկեան տոլարի հիւանդանոցա- յին սպասարկութիւն
- ❖10.000 ամերիկեան տոլարի կեանքի ապա- հովագրութիւն (LIFE)
- ❖10.000 ամերիկեան տոլարի արկածի ապա- հովագրութիւն
- ❖1000 ամերիկեան տոլարի իւրաքանչիւր գա- ւակի կրթաթոշակի ապահովագրութիւն
- ❖96 հիւանդանոցներու ցանց
- ❖110 ախտաճանաչման կեդրոններու ցանց
- ❖INFO SANTE բժշկական տեղեկատուական կեդ- րոնի ծառայութիւն
- ❖GR քրոնիկ հիւանդութիւններու դէմ ապաի- վագրութիւն
- ❖100 ամերիկեան տոլարի LOHJ «Ա. Պուլ- դուրճեան կեդրոնէն սպասարկութիւն:

Մամրամանութեան համար հեռաձայնել.
242556 եւ 242557 քիւրդուն

ԹՈՒՐՔԻԱ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻ
ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ ՊԻՏԻ ՄՂԵՆԸ
Կ'ԸՍԷ ԷՃԵՒԻԹ

ՌՈՒՍԻԱ – ԶԻՆԱՍՏԱՆ
ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԱՌԱԻԵԼ ԲԱՐԵԼԱԻՈՒՄ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌՈՅԹԸՐԶ).– Նախագահ Վլատի- միր Փութին կիրակի օր զովասանքով արտայայտը- ւած է Ռուսիոյ եւ Զինաստանի միջեւ յարաբերու- թեանց մասին, իսկ երկու երկիրներուն արտաքին գործոց նախարարները այս տարուան համար բարձ- րաստիճան մակարդակի բազմաթիւ այցելութիւննե- րու մասին խօսած են՝ կապերուն աւելի եւս թափ տա- լու նպատակով:

1960ական թուականներու կէսերուն իրենց գոր- ծակցութեան խզումէն ետք, Մոսկուա եւ Պէյճիւնկ սուր մրցակիցներ դարձած են՝ համայնավար աշխար- հին մէջ գերակայութիւն ապահովելու համար:

Թշնամութիւնը տեւած է երկու տասնամեակ, որուն ընթացքին սահմանային քանի մը միջադէպեր արձանագրուած են, մինչեւ որ յարաբերութիւնները սկսած են բարելաւուիլ 1980ական թուականներու վերջերուն:

Այդ օրերէն ի վեր Ռուսիա եւ Զինաստան սահմա- նային իրենց հարցերը լուծած են եւ տնտեսական գոր- ծակցութիւն մը մշակած՝ ներառեալ գէնքի առեւտու- րի մարզին մէջ:

Մոսկուա այցելող Զինաստանի արտաքին գործոց նախարար Թանկ Ճիաքուտան մամլոյ ասուլիսի մը ընթացքին անհաւանական նկատած է, որ Զինաստա- նի գաղտնիքներ ծախած ըլլալու յանցանքով այս ամսուան սկիզբը ռուս գիտնականի մը ձերբակալու- թիւնը, յարաբերութեանց պիտի վնասէ:

Վախճիթին Տանիլով հերքած է իրեն դէմ ուղղուած ամբաստանութիւնը:

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԿՈՂՍԷ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՆՆԻՉՆԵՐՈՒ
ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՏՐՈՒԻ
ԲՆՆԵԼՈՒ ԼՐՏԵՍԱԿԱՆ ՕԴԱՆԱԸ

ՊԷՅՃԻՆԿ, 29 (ՌՈՅԹԸՐԶ).– Զինաստան Կի- րակի օր յայտնած է, թէ ամերիկացի քննիչնե- րու արտօնութիւն պիտի տայ այցելելու եւ քննելու չինական Հայնան կղզիին վրայ ան- շարժացած ամերիկեան լրտեսական օդանաւը: Մ. Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյ- նի այս քայլը իբրեւ «շատ դրական» ողջունած է:

Զինաստանի որոշումը յառաջդիմութեան շօ- շափելի առաջին փաստն էր՝ լրտեսական օդա- նաւին գծով ծայր տուած բանավէճին առնչու- թեամբ: Անկկա յատկապէս նշանակալից էր Զի- նաստան – Մ. Նահանգներ յարաբերութեանց

Շար.՝ էջ 10

Բացառիկ բովանդակութեամբ՝
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՇԻՐԱԿ ԵՐԳԱՐԱՆ թիւ 30
(կողքի նկար՝ ՅՈՎՅ. ՊԱՏԱԵԱՆ)

Կը բովանդակէ նաեւ պատկերապարդ տեղեկութիւններ սփիւռքահայ գաղութներէ ներս իրագործուած երաժշտական ձեռ- նարկներու մասին, ըլլան անոնք

ԼԻԲԱՆԱԼ – Ժըպէյլ՝ Օհան Տուրեան, Պալպէթ՝ Շարլ Ալեանուր եւ Լորիս ձգնա- ւորեան, Պէյրութ՝ Ժան Տէր Մէրկէրեան, Շահան Արծրունի, Էմմա Բաքիկեան, Գե- դամ Գրիգորեան, Կոնստանդին Սիմոնեան, Արփինէ եւ Էլիպպէթ Փելիվանեան:

Յարութ Ֆալլեանի «Հորովել» երգչա- խումբը մանկապատանեկան «Կարկաչ», «Բլբլու» եւ Հայ Աւետ. երգչախումբեր:

Գիւմրիի «Գոհար» երգչախումբ – նուա- գախումբը, ղեկ. Մ. Սեպուհ Արգարեան:

ՍՈՒՐԻԱ – Հայէպի Ս. Քառս. Մանկանց 1956ի երգչախումբը, իմը. Արսէն Սայեանի: Հայէպահայ այն երգիչներն ու նուագողնե- րը, որոնք մասնակցեցան Ռ. Հատեճեանի ի պատիւ ուրֆացիներու սարքած մեծա- րանքի հանդիսութեան: Դամակոսի Հ. Կ. Մ.ի «Քնար» երգչախումբը:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ – Հայրենի վաստակաւոր երգիչ Յովհ. Պատալեանի գործունէութեան 60ամեակը եւ իր երգացանկը: Վալէ Պար- սումեանի գլխաւորած «Լարք» երաժշտա- կան միութեան 10ամեակը:

Երգարանի մաս կը կապէ նաեւ անբող- ջական երգացանկերը Նունէ Եսայեանի եւ Թաթա Սիմոնեանի:

192 էջ Գին 10,000 լ. ո. Փնտռել գրատուներէն:

ՍՈՒՐԻԱ ԱՐԱՔՆԵՐՈՒՆ ԿՈՉ
Կ ՈՒՂՂԷ ԱՐԱԳԱՅՆԵԼՈՒ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՐԿՈՒՄԸ
Մուրիա երէկ անհրաժեշտ նկատեց, որ պէտք է արագացուին ճիգերը՝ արարական երկիրներուն մի- ջեւ տնտեսական համարկումը իրականացնելու հա- մար:

Վարչապետ Մոհամէտ Մուսթաֆա Միրօ, որ կը խօ- սէր զրամատնային մարզին նուիրուած համագումա- րի մը ընթացքին, նշեց, որ այս գծով ճիգերու դան- դաղեցումը աւելի պիտի զգուարացնէ ծրագրին գոր- ծադրութիւնը:

Միրօ իրրեւ օրինակ բերաւ 15 երկիրներէ բաղկա- ցած Եւրոպական Միութիւնը, որ յաջողեցաւ տնտե- սական միութիւն ստեղծել, հակառակ այդ երկիրնե- րուն միջեւ տարբերութիւններուն:

Համագումարին կը մասնակցէին արարական տարբեր երկիրներէ տնտեսութեան եւ ելեւմուտքի նախարարներ, ինչպէս նաեւ գործարարներ: Անիկա կազմակերպուած է Պէյրութ հաստատուած Դրա- մատնային Արարական Միութեան եւ Սուրիոյ տնտե- սութեան եւ արտաքին առեւտուրի նախարարութեան կողմէ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ
16 ՀՈԳԻ ՍՊԱՆԱԾ Է
ԽՈՈՎՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ

Ալճերիոյ ոստիկանութիւնը աւելի քան 16 հո- գի սպաննած է Թիպի Ուլուի խռովութիւննե- րուն, յայտնեցին հիւանդանոցային աղբիւ- րներ: Մէկ շաբաթ է կ'եր ծայր տուած խռովու- թիւններուն ինկած զոհերուն թիւը բարձրա- ցած է 35ի:

Պէրպէր ցուցարարներու եւ ապահովութեան ուժերուն միջեւ բախումները ծայր տուած էին անցեալ շաբաթվերջին, երբ ոստիկաններ ծե- ծեցին պէրպէր երեք պատանիներ, խաղաղ ցոյ- ցի մը ընթացքին: Ապահովութեան ուժերը ըսած էին, որ պատանիները անարգած են ոստի- կանները: Պէրպէրներու ծայրայեղական շար

INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պուրճ Համուտի մասնաճիւղի
հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

ԱՁԳ. Գ. ԶԱՄԵԼ ՊԱՇԵՆ - ԹՈՐԳՈՍԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
Հովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)
Մասնակցութեամբ՝
Սիրուն Երգիչ
ԿԱՐՕ ԿԱՊԻՏԱԿԵԱՆԻ
Ընկերակցութեամբ՝
ՍԵԴՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ
եւ իր ճուաղախումբն

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 5 Մայիս 2001, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, State Hall Ban- quet սրահ Century Park պանդոկի մէջ. Բաւիթ:
●Տոմսերը ապահովելու համար
Հեռ. կ.ա. 01-449925. կ.ե. 03-430798:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ
ԱՆՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՅԸ
ԼԵՒՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԸՈԼԷՃ

Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քոլէճը ուրախութեամբ կը յայտարարէ, որ բացած է համալրագիշի դասընթացքի յատուկ բաժանունը՝ վարժարանի «Կիւլպէնկեան Հա- մակարգիշի Կեդրոն»-ին մէջ:

Դասընթացքը պիտի տրուի ԱՆՎԱՐ կեր- պով, բոլոր տարիքի անհասներուն:

Դասաւանդութիւնները կը սկսին Չորեք- շաբթի, 2 Մայիս 2001ին եւ տեղի կ'ունենան ամէն օր կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00, տարբեր դասարաններով:

Արձանագրութիւնները կը կատարուին քո- լէճի քարտուղարութեան մօտ Չորեքշաբթի, 18 Ապրիլէն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն կէսօրէ ետք ժամը 3:00:

Իւրաքանչիւր դասարան կը բաղկանայ 15 հոգի:

Դասերը տեղի կ'ունենան ըստ ուսանողին նախընտրութեան, Երկուշաբթիէն Հինգշաբ- թի, կէսօրէ ետք ժամը 4:00էն 8:30:

Կը դասաւանդուին հետեւեալ միւթերը.

- Introduction to Computers
- Introduction to Windows (Operating System)
- Microsoft Word
- Microsoft Excel
- Introduction to Internet

●Իւրաքանչիւր դասընթացքէ ետք, ուսանողը կ'արժանանայ յատուկ վկայագիրի:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔՄԵՆԻՍՏԱՆԻ ՄԷՋ 30 ՀԱԶԱՐ ՀԱՅ ԿԸ ԲՆԱԿԻ

Ներկայիս Թուրքմենիստանի մէջ կը բնակին շուրջ 30 հազար հայեր, որոնք գլխաւորաբար հաստատուած են Աշխապատի մէջ:

Հայաստանի մէջ Թուրքմենիստանի դեսպան Թուրքի Քուրպանով յայտնեց, թէ Թուրքմենստան համայնքը Թուրքմեն հասարակութեան անբաժան ու կարեւորագոյն մասն է, եւ հայերը շատ լայն մշակութային իր ունեւնեցներ ունին այդ երկրին մէջ:

Թուրքմենիստանի դեսպանը նշեց, որ տարուան ընթացքին Հայաստանէն բազմաթիւ երաժշտական ու թատերական խումբեր եւ ճանչցուած երգիչներ կը մեկնին Թուրքմենիստան: Աշխապատի մէջ նաեւ կան հայկական մշակութային բազմաթիւ օճախներ:

Թ. Քուրպանովի համաձայն, ներկայիս Հայաստանի մէջ կ'ապրին ընդամենը 6 Թուրքմեններ, որոնք դեսպանատան պաշտօնեաներն են:

Ռ. ՔՈԶԱՐԵԱՆԻ ԴԵՄ՝ ԹԵՐԹԻԿՆԵՐ

Իր տեղեկութիւնները քաղելով «Հայկական ժամանակ» թերթէն՝ «Ամարը» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ «Զուարթնոց» օդակայանի մարաստան մէջ գրաւուած է Մոսկուայէն հասած է 500 ք. կշռող ծրար մը, որ կը պարունակէր նախաճաճ Ռ. Քուարեանի դէմ քարոզչութիւն կատարող թերթիկներ: Թերթիկները կը պատկերեն նախաճաճ Ռ. Քուարեանը՝ Միացեալ Նահանգներու զրօշակը ներկայացնող համայնապատկերի մը վրայ, պատճէթի գնդակ մը նետած պահուն:

Այս առնչութեամբ տնային կալանքի տակ առնուած է Արկադի Վարդանեանի թիկնապա՝ Արսէն Աւետիսեան: Ռուսահայատակ գործարար Ա. Վարդանեան քանի մը ամիսէ ի վեր բանտարկուած է հակապետական ցոյց կազմակերպելու ամբաստանութեամբ:

ՐԱՅՅԻՐ

«ԽԵՆԹԸ» ԱՆԳԼԵՐԷՆՈՎ

Վերջերս Նիւ Ճըրքիի Կոմիտասի անուան հիմնարկի հրատարակութեամբ եւ Տոնալտ Արզարեանի թարգմանութեամբ անգլերէնով լոյս տեսած է Բաֆֆիի «Խենթը» պատմական վէպը:

Վերոյիշեալ լուրը փոխանցած է կիպրահայ համայնքի երկրպետ «Փարոս» ամսաթերթը:

ՅՈՒՆԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԻԱ ԿԱՏԱՐԱԾ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ ԿԿԱՅՈՒԹԻՆԵՐ ԿՈՒՏԱՅ

Կեդրոն եւ Նորք Մարաշ համայնքներու առաջին ատենանի դատարանին մէջ ընթացող 27 Հոկտեմբերի դատավարութեան 25 Ապրիլի նիստին ամբաստանեալ Նախրի Յունանեան վկայութիւն տուած է 1998էն 1999 թուականներուն իր Թուրքիա կատարած այցելութիւններուն մասին:

Ան յայտնեց, որ 1998ին այցելած է Արտահան եւ Արդուին: Ամբաստանեալը աւելի մանրամասնեց 1999ի այցելութիւնը՝ ներկայացնելով ուղեւորութեան նախապատմութիւնը: Ըստ Ն. Յունանեանի, 1998ի Հոկտեմբերէն ինք աշխատակցած է Հայաստանի Ազգային պատկերասփիւռի կայանին: Ուզած է սկսիլ «Նոր սերունդ» պայմանական անուանումով քաղաքական հաղորդաշար մը, իսկ աւելի ուշ Հայաստան - Թուրքիա պատկերասփիւռի կամուրջի մը ստեղծումը մտայնացած է:

Թուրքիա մեկնելէ առաջ այցելութեան կապակցութեամբ ան գրուցած է Տիգրան Նաղդալեանի տեղակային եւ Ազգային անվտանգութեան նախարարութեանէն աշխատակցի մը հետ:

Ն. Յունանեան նշած է, որ ինք Մոսկուայի մէջ Թուրքիոյ դեսպանատուն հետադարձ ուղարկած է իր առաջարկները՝ պատկերասփիւռի կամուրջը ստեղծելու մասին: Եւ նշած է, որ այցելութեան ընթացքին կ'ուզէր հանդիպիլ Թուրքիոյ նախագահին, վարչապետին, արտաքին գործոց նախարարին, խորհրդարանի նախագահին, կուսակցութիւններու ղեկավարներուն, ազգայնական ուժերէն՝ «Գորշ գայլեր» ուժի քիւրդ ղեկավարներու եւ ուրիշներու հետ:

Ամբաստանեալը հերքած է մեղադրական եզրակացութեան այն միտքը, թէ ինք «Թուրքիա մեկնելով ջանք չէ խնայած Ազգային անվտանգութեան մարմիններուն ուղադրութիւնը հրաւիրելու համար»:

Ըստ Ն. Յունանեանի, ինքը, եղբայրը՝ Կարէն Յունանեան, պատկերասփիւռի պաշտօնեաներ՝ Կարլէն Չախալեան եւ Յովակ Յովակիսեան մինչեւ Տրապիզոն հասած են անձնական ծախսով:

Ն. Յունանեան յայտնած է, որ իրենցմէ առաջ Թուրքիա այցելած են Ռուսիայէն, Ազրպէյճանէն եւ Ուզբէքիստանէն լրագրողներու խումբեր: Ամբաստանեալը նշած է, որ Թուրքիոյ մէջ հանդիպած է «Անատոլի» լրատու գործակալութեան տնօրէնին, արտաքին գործոց նախարարութեան մամլոյ բանբերին եւ քանի մը նախարարներու հետ: Վերջիններու հետ քննարկած է հայ - Թրքական յարաբերութիւններուն եւ Հայկական Յեղասպանութեան առնչուող հարցեր: Ամբաստանեալը նաեւ յայտարարած է, թէ իր Թուրքիա գտնուած միջոցին ինք այցելած է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի դամբարանը:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ

ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Միւշեօ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՇԱԼԵՊ - 1700ԱՄԵԱԿ

«ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԲԻՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի լուսագոյնս նշելու համար քանի մը տարի առաջ Բերիոյ հայոց թեմի Ազգային առաջնորդարանի հովանաւորութեամբ կեանքի կոչուած էր 1700ամեակի Կեդրոնական յանձնախումբը, որուն իրագործած ձեռնարկներէն ամէնէն յիշատակելին կարելի է որակել «Լուսաւորիչ» յորհելնական երգչախումբի կազմութիւնը եւ համերգային յաջող ելոյթները:

Այս բազմանդամ, աւելի քան 160 անդամներէ բաղկացած երգչախումբը կազմուած էր միջմիութեանական եւ եկեղեցական գոյելի համագործակցութեամբ եւ կ'ընդգրկէր Հայէպի մէջ գործող բոլոր երգչախումբներուն եւ հայ առաքելական բոլոր եկեղեցիներուն դպրաց դասերուն լաւագոյն տարրերը:

«Լուսաւորիչ» յորհելնական երգչախումբին կազմակերպչական աշխատանքը վստահուած էր յատուկ վարչութեան մը, իսկ խմբավարութիւնը՝ հայկահայ վաստակաւոր խմբավար Պօղոս Ապաճեանին:

«Լուսաւորիչ» երգչախումբին ելոյթներուն ղաշնակով կ'ընկերանար հայրենի դաշնակահար Վլադիմիր Պոլոսեան, երգեչները՝ Սիրան Գուրմուշեան, իսկ մենեքի-

րացիները կը մասնակցէին՝ Սալբի Քէլէշեան (Լիբանանէն), Յարութիւն Կէնտրմեան եւ Պերճ Երէցեան: Համերգները տեղի ունեցան 31 Մարտի եւ 1, 7, 8 Ապրիլ 2001ին Կրթասիրաց Մշակութային Միութեան «Զ. Գաբրիէլեան» հանդիսարանին մէջ:

Յայտագիրը առաւելաբար կը բաղկանար Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր երաժշտութեան զանաւորներէն: Ե. դարու Ոսկեդարէն, հայ մատենագրութեան խնկարդ մագաղակեայ էջերէն մինչեւ Թեո օրերը երկարող շրջանէն, ունենդիրին ներկայացուցան հայ եկեղեցւոյ հոգեպարար ու հոգեւոյճ շարական-



«Լուսաւորիչ» երգչախումբը՝ Ելոյթի պահուն

ները (Մովսէս Խորենացի, Պետրոս Գետադարձ, Սահակ Զորափորեցի, Գրիգոր Պաշլաւունի, Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Երզնկացի), ինչպէս նաեւ արդի շրջանի մշակումներ (Կոմիտաս, Մակար Եկմալեան, Ռ. Ալթունեան եւ այլն): Ներկայացուած յայտագիրին մէջ երաժշտական հանրութեան կողմէ մեծ ընդունելութեան արժանացաւ 1700ամեակի առթիւ 1999ի Յունիսի 25ին, Հայաստանի մէջ տեղի ունեցած մրցոյթին միանական երգչախումբին կազմակերպչական աշխատանքը վստահուած էր յատուկ վարչութեան մը, իսկ խմբավարութիւնը՝ հայրենի երաժիշտ Ռուբէն Ալթունեանի, բաւեր՝ պոլսահայ բանաստեղծ Զահարտի, նուագախմբային զործիքաւորում՝ Արթուր Քալմաշեանին: Նաեւ մեծապէս գնահատուեցան Լիբանանէն յատկապէս հրաւիրուած Սալբի Քէլէշեանի երգեցողութեան մատուցած երգերը՝ Սալբի Քէլէշեան (Լիբանանէն), Յարութիւն Կէնտրմեան եւ Պերճ Երէցեան: Համերգները տեղի ունեցան 31 Մարտի եւ 1, 7, 8 Ապրիլ 2001ին Կրթասիրաց Մշակութային Միութեան «Զ. Գաբրիէլեան» հանդիսարանին մէջ:

Յայտագիրը առաւելաբար կը բաղկանար Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր երաժշտութեան զանաւորներէն: Ե. դարու Ոսկեդարէն, հայ մատենագրութեան խնկարդ մագաղակեայ էջերէն մինչեւ Թեո օրերը երկարող շրջանէն, ունենդիրին ներկայացուցան հայ եկեղեցւոյ հոգեպարար ու հոգեւոյճ շարական-

երաժշտութիւն տւերները կը գործեն: Բանաստեղծուհին ուղղունց հայ երաժշտութեան ակունքներուն վերադառնալու աշխատանքը, եւ յոյս յայտնեց, որ յորհելնական այս երգչախումբը օր մը երգէ նաեւ հայրենի երկնակամարին տակ: Կիրակի, 1 Ապրիլի ելոյթի վերջաւորութեան ըստ հրաւիրուեցաւ հիւրարար Հայկալ գտնուող իրանահայ խմբավար եւ ուսուցիչ Գեորգ Գանտահեան, որ մեծապէս գնահատեց այս եգակի նուաճումը եւ մաղթեց, որ «Լուսաւորիչ» յորհելնական երգչախումբին մարմնաւորած այս կուռ բաղիշտ օրինակ դառնայ հայ ժողովուրդի բոլոր հատուածներուն եւ հասանքներուն, որպէսզի Յովհ. Շիրազի բառերով՝ «դառնանք բուռնցք» եւ միասնական ոգիով կերտենք հօգի հայրենիք: Հօգը ժողովուրդը եւ հօգը հայ եկեղեցի:

Իսկ Կիրակի, 8 Ապրիլի ելոյթին վարչութիւնը, գնահատելով Բերիոյ թեմի առաջնորդ Սուրէն արք. Գաթարոյեանին յղացուած եղող այս նախաձեռնութիւնը, յուշանուէրով մը պատուեց առաջնորդը եւ վաստակաւոր խմբավար Պօղոս Ապաճեանը՝ առաջնորդին ձեռամբ անոր նուիրելով ոսկի խաչ մը:

Երգչախումբը նաեւ իր մասնակցութիւնը բերաւ երկու վեհափառներուն ներկայութեամբ կայացած Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումներու Տէր Զօրի եւ Հայէպի հանդիսութիւններուն:

ՅԱՆՈՐ ՊԵՔԵԱՐԵԱՆ

Հայէպ, Ապրիլ 2001

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԷԻ ՄԷՋ

22էն 23 Ապրիլին Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Ա. Պետրոսեան թեսաղոնիկէի մէջ հանդիպումներ ունեցած է Մակեդոնիոյ եւ Թրակիոյ նախարարութեան գլխաւոր քարտուղար Ժ. Լիսարիտիսի, թեսաղոնիկէի քաղաքապետ Վ. Փափալէոքիոփուիսի եւ Քալամարիոյ քաղաքապետ Բ. Էքոնոմիտիսի հետ:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուած են Հայաստանի նախագահի Յունաստան կատարած այցելութեան ժամանակ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ նախարարին հետ ձեռք բերուած համաձայնութիւններուն իրականացման կարելիութիւնները, ինչպէս նաեւ թեսաղոնիկէ եւ

Գիւմրի քաղաքներու միջեւ բարեկամութեան եւ համագործակցութեան

մասին ստորագրուած համաձայնագրի իրականացման միջոցները:

Հովանաւորութեամբ՝
Հ. Բ. Ը. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԻ

Նախագահութեամբ՝
ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ

ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՇԱԼԵՊՈՒԹԻՒՆ

Նուիրուած՝
ՏՏՈՐԸ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԾ
ՊՐՆ. ՇԱՆԻ ՈՒՐՖԱԼԵԱՆԻ

40ամեայ կրթական ծառայութեան
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 11 Մայիս 2001, երեկոյեան ժամը 8:00ին, Հ. Բ. Ը. Մ. Ի «Երուանդ Տեմիրճեան» Կեդրոնի համադասարանին մէջ:

ՇՐԱԽԵՐ

ԱՊՐԻԼ 24Ի ՈԳԵԿՈՉՈՒՄ ՊԱԼԱՄԱՆՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԷՋ



Գիրքերու ցուցադրութեան անկիւնը

Ապրիլ 24ի ոգեկոչման յատուկ հանդիսութիւն մը տեղի ունեցաւ 24 Ապրիլ 2001ին կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Պալամանտ համալսարանի էլեքթիկ առողջապահական կաճառի սրահին մէջ, նախաձեռնութեամբ համալսարանի հայ ուսանողներուն, գործակցութեամբ դասախօսներու եւ պատասխանատուներու:

Ոգեկոչման հանդիսութեան ներկայ եղան համալսարանի ուսանողները, դասախօսներ եւ հիւրեր: Սրահը յարգարուած էր հայոց Եղեռնին նուիրուած գիրքերով, արաբերէն, անգլերէն, հայերէն հրատարակութիւններով, լուսանկարներով, եւ պատմական հրամանագրիներու պատճէններ, ինչպէս՝ Թալէթ փաշայի հայալինք քաղաքականութեան հրամանագիրը, Շերիֆ Մեքքէի մարդասիրական հրամանագիրը՝ հայ միացորդացը պաշտպանելու եւ հիւրընկալելու արարական հայրենիքի հողատարածքին վրայ:

Օրուան գլխաւոր դասախօսն էր համալսարանի դասախօսներէն փրոֆ. Հասան Ժուհի, որ նախ անդրադարձաւ ջարդերու պատմականին, ապա շեշտը դրաւ մարդկային իրաւանց ոտնակոխումին, հայոց ցաւազին ցեղասպանութեան, եւ թելադրեց բոլորին պայքարիլ ցեղասպաններու դէմ, մասնաւորաբար՝ արգիլել թրքական արտադրութիւններու առեւտուրը մեր շուկաներուն մէջ եւ չզննել այդ ապրանքները: Ան յիշեց նոյնպէս հրեայ-թուրք գործակցութիւնը հայոց ջարդերուն ընթացքին:

Յուցադրուեցաւ նաեւ Եղեռնը ներկայացնող տեսաերկ մը, որուն բացատրութիւնները ներկայացուց ուսանող Մարկիթ Շիրինեան:

Տպաւորիչ ձեռնարկ մը եղաւ այս, յարգանք մը հայ նահատակներուն, նոր սերունդի ներկայացուցիչներուն եւ Պալամանտ համալսարանի տեսչութեան կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԷՅ - ՊԱՐՄԱՆՈՒՀԻՆԵՐԸ՝ ԷՀՏԷՆԻ ՄԷՋ



Հ.Մ.Ը.Մ.Ի երգ - պարմանուիմները Էհտէնի մէջ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ եւ կենսոլորտի նախարարութեան գործակցութեամբ, Կիրակի, 22 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ. Պորճ Համուտի, Անթիլիասի, Պէյրութի եւ Ժաշյոյէի մասնաճիւղերուն երէց - պարմանուհիները Էհտէնեան Էհտէնի անտառը, որ պետութեան կողմէ պաշտպանուած շրջան մըն է:

Կենսոլորտի նուիրուած Հ.Մ.Ը.Մ.Ի օրը սկսաւ ժամը 9:00ին, երբ կենսոլորտի նախարարութեան ներկայացուցիչներ Էհտէնի մէջ դասախօսութիւններ տուին բնութեան պաշտպանուած շրջաններու, ինչպէս նաեւ բնութեան պահպանման առնչութեամբ երիտասարդութեան դերակատարութեան մասին:

Դասախօսութեան ետք, մինչեւ ժամը 1:30, հինգ խմբակներու բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ի երէցները եւ պարմանուհիները, հետեւելով Հ.Մ.Ը.Մ.ի դաւանաքին մաս կազմող «Պաշտպանել բոյսերն ու անասունները» կէտին, աշխատեցան Էհտէնի անտառին մէջ: Անոնք փայտէ աստիճաններ գետեղեցին, անցքեր բարեկցին: Անոնք կէսօրին հիւրը եղան շրջանի ճաշարաններէն մէկուն:

Օրուան աւարտին Հ.Մ.Ը.Մ.ականները շուշանաձողիկը կրող յուշանշան մը յանձնեցին Էհտէնի պաշտպանուած անտառի պատասխանատուին, որ իր կարգին բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի գործակցութիւնը:

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՑԵՆ

HAMPIG SASSOUNIAN C - 88440
CSP - L.A.C. D - 5 - 232 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ԵՂԵՈՆԻ 86ԱՄԵԱԿ

ՊԵՏԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացում վերջերս արձանագրուած լուրջ յաջողութիւնները շատերի մօտ այն թիւը տպաւորուեթիւնն են ստեղծում, թէ այդ ուղղութեամբ կատարուող աշխատանքները բաւարար են ոչ միայն դարասկզբի մեծ ողբերգութեան միջազգային ճանաչման, այլեւ նրա հետեւանքների աստիճանական յաղթահարման համար։

Մինչդեռ Արեւմուտքի մի շարք երկրների կողմից զուտ քաղաքական նկատառումներով ձեռնարկուող քայլերը ամենեւին էլ չի կարելի նոյնացնել մեր սեփական նպատակների ու խնդիրների հետ։ Եւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումով պայքարը ոչ միայն չի աւարտուելու, այլեւ ձեռք է բերելու աւելի սուր ընդդէմ ու լայն ընդգրկում։

Մեր նպատակը Հայ Դատի հետապնդումն է, որի համար Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացը ստեղծում է անհրաժեշտ բարոյաքաղաքական հիմք ու նաեւ մթնոլորտ՝ այն երկրներում ու կազմակերպութիւններում, որոնք այսօր սոսկ ճանաչում են ճշմարտութիւնը, սակայն չեն պատրաստոււմ մեր փոխարէն տէր կանգնելու հայութեան իրաւունքներին։ Այս հարթութեան վրայ սպասոււմ է երկարատեւ ու դժուարին պայքար Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացի հետեւանքով ստացած ծանր հարուածներից յետոյ ուշքի եկած եւ համապատասխան գիտական ու քարոզչական ենթակառուցումներ հանրութեան միջոցով հակայարձակման անցած թուրքական պետական մեքենայի եւ նրա քաղաքական նպատակներն իրականացնող գիտական եւ քարոզչական հօգօր կենտրոնների դէմ։

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ վերջիններիս հնարաւորութիւնները անհամեմատ զերպանցում են մեր սուղ ու սահմանափակ միջոցներն ու պաշարները, այդ պայքարը լինելու է խիստ ծանր ու դժուարին։ Մեր ունեցած հիմնական առաւելութեան՝ բազմամարդ ու կազմակերպուած Սփիւռքի վրայ յոյս դնելու նախորդ մարտավարութիւնը ներկայումս նոյնպէս չի կարողանալու ապահովել յաղթանակը, քանզի Սփիւռքը պետութիւն չէ եւ կարող է օգտակար լինել միայն անմիջական քարոզչական հակադդեցութիւն եւ արագ արձագանգում ապահովելու տեսանկիւնից։ Մինչդեռ խօսքը երկարաժամկէտ, ռազմավարական խնդիրների առաջնադրման ու հետապնդման մասին է, որոնց մշակումը եւ իրականացման անհրաժեշտ պայմանների ապահովումը հնարաւոր է միայն ու միայն պետական մօտեցման ու հոգածութեան պարագայում։ Եւ խնդիրն այստեղ չի սահմանափակոււմ միայն համապատասխան գիտահետազօտական ու քարոզչական աշխատանքների ֆինանսական ապահովման անհրաժեշտութեամբ, քանզի այդ առումով Սփիւռքը եւս կարող է իր լուրջ լոււման ներդնել։ Աւելի կարեւոր է այդ գործը մշտապէս ու հետեւողականօրէն իրականացնող ենթակառուցւածքների ամրապնդումն ու նրանց աշխատանքի որակի բարձրացումը։

Այս առումով խորհրդային Միութեան փլուզման նախօրէին մեզանում ստեղծուել էր բաւականին ուժեղ ու բազմամարդ ակադեմական հիմնարկների մի համակարգ, որին վերջերս միացաւ նաեւ Յեղասպանութեան հիմնարկ-թանգարանը։ Սակայն ներկայումս ակնյայտ է դառնում, որ իրենց միջոցներով ու հնարաւորութիւններով այս կենտրոնները լաւագոյն դէպքում կարող են լուծել թուրքական գիտական ու քարոզչական ենթակառուցումներին աշխատանքին անմիջականօրէն արձագանգուած եւ հակադարձելու շատ նեղ ու սահմանափակ խնդիրները։ Աւելին. անգամ այդ առումով առկայ հնարաւորութիւններն այնքան սահմանափակ են, որ աւելորդ է անգամ մտածել, թէ քարոզչութեան ժամանակակից միջոցներով ու մասնաւոր թեյքիւն հնարաւորութիւններով ապահովուածութեան տեսանկիւնից նրանք ի վիճակի կը լինեն ոտք գցել իրենց թուրք ընդդիմախօսների հետ։

Այստեղ ուղղակի տանուլ կը տանք մրցակցութիւնը՝ ներկայ յետամնացութեան ու աղքատութեան հետեւանքով։ Տանուլ կը տանք նաեւ այն պատճառով, որ նման համազգային ու համապետական գործը շարունակում ենք իրականացնել առանձին կազմակերպութիւնների տանիքի տակ կամ էլ առանձին հաստատութիւնների ներսում՝ չզիտակցելով միասնական կենտրոնի ու այն իրականացնող համապատասխան գիտական ու քարոզչական օղակների ձեւաւորման անհրաժեշտութիւնը։ Ինքնագործունէութիւնը, մէկս միւսից առաջ անցնելու եւ աւելի խելօք ու հայրենասէր երեւալու զուտ հայկական մոլուցքը ու նաեւ առանձին կազմակերպութիւնների կողմից իրականացուող աշխատանքների հնաբոյր-համբարային ընդթը ներկայումս արդէն յուշում են նման մեթոդներով եւ ցրուած ուժերով թուրքական գիտաքարոզչական մեքենայի հետեւողական ջանքերին դիմակայելու անհնարինութեան մասին։

Այսօր անհրաժեշտ է Հայ Դատի պայքարի ռազմավարութիւն մշակող եւ նրա քարոզչական ապահովումն իրականացնող մէկ միասնական համակարգ հայաստանեան գիտական-մտային ներուժը, Հայաստանի, ինչպէս նաեւ Սփիւռքի կազմակերպութիւնների կապերի ու ֆինանսական հնարաւորութիւնների միասնական ճանապարհով։ Միայն պետական մօտեցման, աջակցութեան ու հովանաւորութեան պարագայում հնարաւոր կը լինի մէկ համակարգի մէջ միաւորել, հաշուառել ու նպատակային աշխատանքի մղել մեր ունեցած բոլոր ուժերն ու հնարաւորութիւններն ու հասնել յաջողութեան։

գԷՈՐգ ԽՈՒԴԻՆԵԱՆ

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 86ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈԶՈՒՄՆԵՐ՝ ԵՐԿՐԷ ԵՐԿԻՐ

●ՈՒՔՐԱՆԻԱ

Ուքրանիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան աշխատակիցները, դեսպանին գլխաւորութեամբ, Քիեւի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ 24 Ապրիլին այցելած են Քիեւի Փոքրովեան եկեղեցին, որուն բակին մէջ հաստատուած 13րդ դարու հայկական յուշաքարին առջեւ Հայկական Յեղասպանութեան զոհերուն յիշատակին ծաղկեպսակներ դրած են։

Նոյն առիթով Ուքրանիոյ հայկական եկեղեցիներուն մէջ ցեղասպանութեան զոհներուն յիշատակին պատարագներ մատուցուած են։

●ՎՐԱՍԱՆ

Վրաստանի մէջ Հայաստանի դեսպանութիւնը, հայ համայնքին աջակցութեամբ, Թիֆլիսի Պետրոս Աղամեանի անուան հայկական թատրոնին մէջ կազմակերպած է յիշատակի երեկոյ մը, որուն ներկայ եղած են Գէորգ արք. Սերայդանեան, Վրաստանի մէջ հաւատարմագրուած շարք մը դեսպաններ եւ վրացի պետական պաշտօնատարներ։

●ՊԻՇՆՈՒՌԻԱ

Մինսքի մէջ Ալեքսանտր Նեւսքիի եկեղեցւոյ բակին մէջ կանգնեցուած խաչքարին մօտ 24 Ապրիլին տեղի ունեցած է Հայկական Յեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած սուգի հանրահաւաք մը։

Հանրահաւաքին ընթացքին խօսք առած է Պիելո-Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպան Սուրէն Յարուելունեան։

●ՊՐԱՁԻԼ

Հայկական Յեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ձեռնարկ մը տեղի ունեցած է նաեւ Պրագիլի մէջ։

Սան Փաուլօ նահանգի Օրէնսդրական ժողովի (նահանգային խորհրդարան) նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցած է յատուկ լիագումար նիստ մը, որուն ներկայ եղած են խորհրդարանի անդամներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, դիւանագէտներ, հայկական համայնքը ներկայացնող բոլոր միութիւններու, ինչպէս նաեւ կրօնական կազմակերպութիւններու ղեկավարներ եւ լրատուական միջոցներու ներկայացուցիչներ։

●ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հայկական Յեղասպանութեան 86ամեակին առիթով Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպանութիւնը կազմակերպած էր ձեռնարկ մը, որուն բացման խօսքը արտասանած է Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան։

Դեսպանը մասնաւորապէս կարեւոր նկատած է այն փաստը, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին մէջ դրուած է Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը։

ԶԱԻԱՍԷ ԿԸ ՅԱՐԳԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՉՈՒՇԵՐՈՒՆ ՅԻՃԱՏԱԿԸ

ԲԱԶՄԱՄԱՐԴ ԶԱԻԱՔ՝ ՆԻՆՈԾՄԻՆՏԱՅԻ ՄԷԶ

24 Ապրիլին Հայկական Յեղասպանութեան 86ամեակին առիթով քազմահազար ժողովուրդի ներկայութեամբ հաւաք մը տեղի ունեցած է Զաւաթքի Նինոծմինտա (նախկին Պոկտանովկա) քաղաքին մէջ, ուր առաւօտեան կանուխ ժամերէն Զաւաթքի տարբեր շրջաններէն հայեր հաւաքուած էին։

Յիշատակի հաւաքին բացումը կատարած է տեղական իշխանութիւններու ներկայացուցիչ եւ ջաւախահայ մտաւորական Լ. Ղարապուլեանը։ Խօսք առած են նաեւ տեղական «Արշալոյս» թերթի խմբագիր Մ. Կատախանեան եւ ժողովրդային կրթութեան բաժանմունքի վարիչ Ռ. Սթոյեան։

Եղեռնի առեղ զոհերուն յիշատակը յարգուած է մէկ վայրկեան լռութեամբ, ապա քաղաքի երիտասարդութեան պալատի բաց բեմին վրայ ազգագրական համերգով հանդէս եկած են հայ դպրոցականներ։

Այնուհետեւ ծաղկիներ եւ ծաղկեպսակներ դրուած են Եղեռնի զոհերու յուշարձանին, իսկ քաղաքամերձ խոշաբէկ գիւղի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ մատուցուած է հոգեհանգիստի պատարագ։

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԳԱԵՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ԹՐԲԱԿԱՆ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ ԱՌՋԵԻ

Երեքշաբթի, 24 Ապրիլի յետմիջօրէի ժամը 3։00էն սկսեալ Հ. Յ. Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը Լոս Անճելոսի թրքական հիւպատոսարանին առջեւ կազմակերպեց բողոքի ցոյց մը, որուն մասնակցեցաան շուրջ 2500 ամերիկահայեր։

Յուցարարները բարձրաձայն կոչեր արտասանելով կը պահանջէին, որ Թուրքիա ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը։ Հ. Ե. Դ.ի համար տարինեւրէ ի վեր կրկնուող այս ցոյցը այս տարի աննախընթաց տարողութիւնն ստացաւ՝ չնորհիւ մեծ թիւով մասնակիցներուն։

Յուցարարները կը գոչէին՝ «Արդարութիւն կ'ուզենք»։ Հ. Ե. Դ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ Մեքքան Մեքքեան շնորհակալութիւն յայտնեց ցոյցին մասնակիցներուն եւ հաւաստիացուց, որ Հ. Ե. Դ. պիտի շարունակէ անարդարութեան դէմ իր պայքարը, մինչեւ հայութեան պահանջներու արդար հաղթուցմը։

Խօսք առաւ նաեւ Կլենտէյլի Միացեալ Դպրոցական խորհուրդի անդամ Կրէկ Գրիգորեան, որ ցուցարարներուն թելադրեց շարունակել իրենց աշխատանքը Հայ Դատի հետապնդման գծով։

Բողոքի ցոյցը վերջ գտաւ «Մեր Հայրենիք» քայլերգով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 86ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈԶՄԱՆ ՉԵՌՆԱՐԿՆԵՐ՝ ՔԱՆԱՏԱՅԻ ՄԷԶ

◆ՄՈՆՐԷԻԱ

20 Ապրիլին Մոնրէալի մէջ Եղեռնի միացեալ յանձնախումբի նախաձեռնութեամբ եւ Հայ Դատի Մոնրէալի եւ Լաւալի յանձնախումբերու մասնակցութեամբ տեղի ունեցաւ ուսանողական բողոքի ցոյց մը։ Քայլարշախին մասնակցեցան Մոնրէալի Ս. Յակոբ եւ Ալիք Մանուկեան վարժարաններու երկրորդական կարգերէն աւելի քան 250 աշակերտներ եւ չրջանի երիտասարդներ։

Հաւաքին հանդիսավարն էր Քրիստին Տաղաւարեան։ Անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով խօսք առին երկու վարժարաններու ներկայացուցիչներ, որոնցմէ ետք երիտասարդութեան անուանի խօսք առաւ Արօ Նիգիպլեան, որ պահանջեց Քանատայի կառավարութեւնէն հետեւիլ Ֆրանսալի եւ ճանչնալ Հայկական Յեղասպանութիւնը։ Աշակերտական այս ցոյցը մէկ ժամ անդամալուծեց Մոնրէալի մայր պողոտայ Ս. Քաթրինի երթեւեկը։

22 Ապրիլին Մոնրէալի Արմէն Քեպլէ Ալքը Մանուկեան վարժարանի «Կէօնճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ձեռնարկ մը, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Մոնրէալի եւ Լաւալի կոմիտէներուն, ՈԱԿի Մոնրէալի ենթաշրջանին, Հ.Բ.Ը.Մ-ի Մոնրէալի մասնաճիւղին եւ ՀՕՄի Մոնրէալի եւ Լաւալի մասնաճիւղերուն։ Զեռնարկին ներկայ էին Հայաստանեայց Առաքեպկան եկեղեցւոյ եւ միւս յարանուումթիւններուն հոգեւոր հովիւները, Յունաստանի եւ Կիպրոսի հիւպատոսները, ուքրանական, յունական եւ հրէական համախրմումներու ներկայացուցիչները, պետական ու քաղաքական դէմքեր եւ աւելի քան 750 հոգի։

Զեռնարկին բացումը կատարեց Վիգէն Աղադրեան։ ՈԱԿի խօսքը փոխանցեց տոքթ. Յարութիւն Սաղըրեան, Հ. Յ. Դ-ի խօսքը՝ Հ. Յ. Դ. Քանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, ՀՕՄի

կողմէ խօսք առաւ Լալիկ Փափագեան։ Ապա ՈԱԿի ներկայացուցիչը՝ Յարութիւն Արզումանեան, Հ. Յ. Դ. Քանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, Քանատայի Հայ Դատի Յանձնախումբէն Ռուբէն Գուլյումճեան եւ Հայ Իրաւանց հաստատութեան կողմէ Արմէն Նուպար Մամուրեան պատասխանեցին ներկաներուն հարցումներուն։ Անկէ ետք Լալիկ Փափագեան ընթերցեց Քանատայի Դաշնակցային եւ Քեպլէքի նահանգային խորհրդարաններուն յղուած բանաձեւը, որ Քանատայի կը պահանջէ, Ֆրանսայի օրինակին հետեւելով, պաշտօնապէս ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը։

Յաջորդաբար խօսք առին Մոնրէալի Ս. Լօրանի եւ Մոնրէալի քաղաքապետներուն ներկայացուցիչները, խորհրդարանի անդամներ, ծերակուտական մը, Հայաստանի դեսպան Արա Պապեան եւ Քանատայի առաջնորդական տեղակալ Խաժակ եպս. Յակոբեան։

23 Ապրիլին Մոնրէալի Հայկական Յեղասպանութեան յուշարձանին մօտ տեղի ունեցաւ երիտասարդական հսկում, կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Քանատայի Երիտասարդական Միութեան Կեդրոնական վարչութեան։ Հսկումին ընթացքին գործադրուեցաւ զեղաբեւտական յայտագիր։ Արմէն քհնյ. Իշխանեան տէրունական աղօթքով կատարեց հսկումին բացումը։ Ապա Ռուբինա Քիւփէլեան ասմունքեց Նենսի Գրիգորեանի Հայկական Յեղասպանութեան մասին գրուած գրական կտորը։ Յուշարձանի կառոյցին մասին բացատրութիւն տուաւ Լալէ Մանճիկեան։ Ընթերցուեցան Եղեռնէն ճողոպրած 4 վերապրողներու նամակ-որագրութիւնները։ Հ. Յ. Դ. ՔԵՄի խօսքը փոխանցեց Սեւակ Ղազարեան։ Հսկումին մասնակցեցան Լաւալի «Գետաշէն» եւ Մոնրէալի «Դօր» պատանեկան միութիւնները եւ 300 հայրդիներ։

◆ՕԹԹՎԱ

24 Ապրիլին Քանատայի խորհրդահանգին մէջ տեղի ունեցած է հոգեհանգիստ եւ Յեղասպանութիւն, որուն ներկայ գտնուած են ծերակուտական Շըրլի Մահէօ, երեսփոխան Իրուէն Քաթլըր, Ռուսիոյ, Յունաստանի եւ

Փանամայի դեսպանները, Ֆրանսայի դեսպանատան առաջին քարտուղարը, Մալուելի հիւպատոսը, Զեխիոյ դեսպանատան ներկայացուցիչը, Քանատայի հրէական համախմբումի ներկայացուցիչը, Քանատայի մէջ Հայաստանի դեսպան Արա Պապեան եւ Քանատայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները։

Թորոնթոյէն, Մոնրէալէն եւ Լաւալէն աւելի քան հազար հայեր հաւաքւած են խորհրդարանի չրջափակին մէջ։

Ժողովրդային հաւաքին բացումը կատարած է Քանատայի Հայ Դատի Յանձնախումբէն Սիլվա Պարոնեան։ Հաւաքին ներկայ եղած են երեսփոխաններ Մատլէն Տայֆոն Կիրայ եւ էլլենի Պաքոփանոս, փոխադրամիջոցներու նախարար Տէյվիտ Քոլոնէթ եւ ծերակուտական Շըրլի Մահէօ։ Յաջորդաբար խօսք առած են երեսփոխանները, որոնք իրենց զօրակցութիւնը յայտնած են, մինչ ծերակուտական Շըրլի Մահէօ յայտնած է, թէ անհրաժեշտ է վերջ տալ բառախաղերուն եւ Հայկական Յեղասպանութիւնը ընդունիլ իբրեւ ցեղասպանութիւն։ Ան կոչ ուղղած է Քանատայի կառավարութեան՝ ճանչնալու Հայկական Յեղասպանութիւնը։

Թրքական դեսպանատան դիմաց հասած ցուցարարներուն շարքերը արձակած են բողոքի կանչեր։ Ապա խօսք առած են Գէորգ Գէորգեան (ՔԵՄ), Զաւէն Տէր Սահակեան, Անի Ապրազեան եւ Սեւակ Յոփսէփեան։ Շանթ Գարայեան ներկայացուեցաւ Հ «Կոյր աշուղը», Ներսէս Տօյմաճեան կիթառով ներկայացուցած է հայկական երաժշտութեան փունջ մը։ Ապա Մարալ Գանաճեան, Թամար Սթամպուլեան եւ Թալին Միւնոյեան արտասանած են Միամանթոյի «Ափ մը Մոխր»ը։

◆ԹՐԲԱԿԱՆ ՀՎԱԶԳԷՅՈՒԹԻՒՆ

Այս ցոյցէն ետք 200 թուրքեր ցոյց կատարած են Օթթալի խորհրդարանի դիմաց։ Անոնք բարձրացուցած էին

թրքական դրօշակներ եւ «Յեղասպանութիւն չէ պատահած», «Պատմութիւնը ձգեցէ՛ք պատմաբաններուն», «Կասեցուցէ՛ք սուտը» լողունգներով պատառներ։

Առաջին անգամ է, որ նման թրքական ցոյց մը կը կազմակերպուի Օթթավայի մէջ։

◆ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԵՐՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս նախապէս հաղորդած ենք, Հայկական Յեղասպանութեան 86ամեակին նախօրեակին Քանատայի Հայ Դատի յանձնախումբը կազմակերպած էր բացիկներու արշաւ մը՝ ուղղուած Քանատայի վարչապետին՝ պահանջելով Հայկական Յեղասպանութեան ճանաչումը։

Ապրիլ 24ին վարչապետ Քրեթիէն հայութեան ուղղած իր խօսքին մէջ խուսափած է Յեղասպանութիւն բառը գործածելէ, փոխարէնը գործածելով աղէտ բառը եւ բաւականաւրով ամբողջ իրողութիւնը ողբերգութեան պարունակին մէջ տեղադրելով։

Միւս կողմէ, Քանատայի մշակոյթի նախարար Շիլա Քափս իր ուղերձին մէջ չեւտած է Յեղասպանութիւն բառը եւ իր ցեւակցութիւնը յայտնած է Քանատայի Հայ համայնքին։

Հրակամություն եւ Մշակույթ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱԻ ԽՄԲԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ



«Պուպրիկը», գործ՝ Մահա Ասուատի

Չորեքշաբթի, 18 Ապրիլի կէսօրէ ետք ժամը 4:00ին տեղի ունեցաւ կերպարուեստի խմբա-յին ցուցահանդէսի մը բացումը «Սանթր Սոսիւ Բիւլթիւրի» մէջ (Ճըմմէյգի)։

Ցուցահանդէսին իրենց մասնակցու-թիւնը բերած էին քսան երի-տասարդ կերպարուեստա-գէտներ, որոնց ստեղծագոր-ծութիւնները ոճային առու-մով խայտարղէտ պատկեր մը կը պարզէին։

Արուեստի տարրեր հիմ-նարկներու եւ կամ սթիլիս-տիկներու մէջ իրենց մասնագի-տական կրթութիւնը ստա-ցած այս երիտասարդ - երի-տասարդուհիները օժտուած են (առաւել կամ նուազ չա-փով) երփնագրելու կարողա-կանութեամբ, ունին գոյնի լաւ զգացողութիւն եւ գիծի արտայայտչականութիւն։ Ոմանք ներշնչուած են ուղ-

ղակի բնութեան, իսկ ուրիշներ ուժ տուած են երեւակայութեան։ Այս կեր-պարուեստագէտներուն ներշնչման աղբիւրը Արեւելքն է իր բնութեամբ, վառ գունաշխարհով ու նաեւ՝ խորհրդ-



«Բնանկար», գործ՝ Ռանիա ժըրտիի

ղաւորութեամբ։ Արեւմտեան ազդե-ցութիւնները աւելի ձեւական բնութ-յան քան խորագոյնի նշանակութիւն։ Անոնք մէկ կողմէ իրենց տարաբնոյթ ներաշխարհը կը դրսեւորեն եւ, միւս կողմէ, կ'արծարծեն նաեւ համամարդ-կային խնդիրներ։

COMPUTER LEARNING CENTER
BASIC COURSES
Microsoft Windows - Word - Excel
Power Point - Outlook - Internet

SPECIALIZED PROGRAMS
Graphic & Animation - Computer For Businessman
Computer For Engineers & Architects

Mesrobian Technical College
The Pioneer In Technical Education

Arax Street, Bourj Hamoud
Tel: 01 / 260 504 - 254 938/9
Fax: 01 / 262 955
E-mail: mesrobian@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com

Wednesday,
May 2
(M.W.F. Classes)
4th Session



«Արեւածաղիկներ», գործ՝ Նանի Թորոսեանի

Առաւել օժտուածութիւն կը դրսեւո-րեն հետեւեալները. Մահա Ասուատ, Լարա Պաղտասարեան, Մարալ Տէր Պո-ղոսեան, Ռանիա ժըրտի, Մամուռ Նը-տըր, Տիարա Խուրի, Անի Բիւրբեճեան, Ժոսիկ Ռայիտի, Քարա Սֆէյր եւ Նա-նի Թորոսեան։

Ռանիա ժըրտի առաւելաբար բնանը-կարիչ է։ Անոր բնակարանները չեն հե-



«Սերկուի», գործ՝ Նանի Թորոսեանի

տեւի բաւարարական սկզբունքներու, այլ ազատօրէն կը պատկերեն տափա-տաններ (երբեմն՝ երեւակայական), ուր հեղինակը կը փորձէ օղային տարածա-կանութեամբ փոխարինել կեանքի բա-ցակալութիւնը։

Մահա Ասուատ Արեւելքի ծնունդ կը թուի ըլլալ՝ թէ՛ արտայայտչաձեւերով եւ թէ՛ էութեամբ։ Գոյնն ու գիծը միջոց են արտայայտելու համար կեանքի շար-ժումը, որ ցուցականօրէն դրսեւոր-ւած է անոր «Պուպրիկը» գործին մէջ։

Իսկ Նանի Թորոսեան իր կատարողա-կան մակարդակով արդէն իսկ որոշ հա-ստեղծութիւն կը դրսեւորէ։ Անոր «Մեր-կուհին» թէ՛ իր միջավայրով եւ թէ՛ կեր-պարային արտայայտչականութեամբ խառնուածքային այնպիսի վիճակ մը կը պարզէ, ուր լքուած ու տառապած կի-նը ակնդիրին կը ներկայանայ իր մերկ ու «քափանցիկ» կացութեան մէջ։ Անոր «Արեւածաղիկները» տարբեր բնոյթ ու-նին։ Ոչ միայն ազատօրէն կը շարժին միջոցին մէջ, այլեւ իրագործուած են ազատ ու համարձակ վրձնահարուած-ներով եւ կը դրսեւորեն բնութեան ան-կաշկանդ ու տարբերային կացութիւնը։ Նանի Թորոսեան (ինչպէս նաեւ՝ իր վրձնակիցներէն շատեր) շարունակելու պարագային լաւ ապագայի հեռանկա-րը կ'աւելետեն մեզի։

Այս եւ նմանօրինակ ցուցահանդէս-ները մեծապէս կը նպաստեն Լիբանանի կերպարուեստի զարգացման ու տա-րածման։

ՄԷԿ ԱՅԼ ԱՇԽԱՐՀ՝ ԱՅՍՈՒ ՄԻԱՄՆԱԿԱՆ

Միսթարեան միաբանութեան հիմնադրութեան 300ամեակն է այս տարի։ Խորհրդային շրջանին իսկ Հայաստանի մէջ բարձր գնահատուած էր Միսթարեաններուն մշակութային պատկառելի վաստակը։

300ամեակին առիթով Միսթարեաններու վաս-տակին անդրադարձած է նաեւ հայրենի «Հայ-եացք Երեւանի» ամսաթերթը, զոր կու տանք ստորեւ։

Երկու դար եւ մօտ երեք տասնամեակ տեւած բաժանումից յետոյ Միսթարեան միաբանու-թեան երկու թեւերը վերամիաւորուեցին։ Երրորդ հազարամեակի շեմին կայացած այս միացու-մը, թերեւս, միաբանութիւնը ցնցող տագնապներին մէջ տալու իւրօրինակ փորձ է։ Դրա անհրաժեշտու-թիւնը պարտադիր է յատկապէս այժմ, երբ հայու-թիւնն ակնածանքով ու շուքով նշուած է միաբանու-թեան 300ամեակը։

Ասուած է՝ ժամանակն ամենամեծ որոշիչն է։ Չնա-յած դարերի մէջ հաստատուած սկզբունքներ կան, որոնք վերայայտնաբերելու, վերահաստատելու կա-րիք չունեն։ Ուղղակի շեշտաւորումներն են փոխումը, ընդգծումներն են խորանումը։ Նոր սրբազրուածների որակը ճշդելու համար, սակայն, պատմութեան խոր-քերը նայելու, անցեալն ու ներկան համադրելու պա-հանջ է առաջանում։

Ուրեմն՝ ճիշդ 227 տարի առաջ Վենետիկի Ս. Ղազար կղզում ներքին պառակտումներ սկսուեցին։ Միա-բանութեան հիմնադիր Միսթար Սեբաստացու անմի-ջական յետնորդ հայ Ստեփանոս Մելքոնեանի արքա-հայրութեան շրջանն էր։ Անհամաձայնութեան պատ-ճառը միաբանութեան կանոնադրութեան փոփոխ-ման, ազգային կրթական ըմբռնումների, սահմա-նադրութեան շուրջ ծաւալուած վէճերն էին, որոնք գնալով այնքան սրուեցին, որ միաբանների մի խումբ Ա. Բարթիկեանի գլխավորութեամբ թողնելով Վենե-տիկը՝ հաստատուեց Տրիեստում։ Եւ Մարիա Թերե-զա կայսրուհու աջակցութեամբ Ս. Մարտիրոսաց եկեղեցում տպագրատնով վանատուն հիմնադրեց։

Որոշ ժամանակ անց անհնազանդ խումբը տեղա-փոխուած է Վիեննա։ Գնահատելով նրա վարքը, գի-տակրօնական ու հոգեւոր-մշակութային աշխատանք-ները աւստրիական կառավարութիւնը ճանաչում է նորակազմ միաբանութեան գոյութիւնը։ Շատ կարե-ւոր ժամանակահատուածում Վիեննայի Միսթար-եանները կարողանում են յաւելել իրենց անդամների թիւը, մեծացնել դպրոցական ցանցը (ուսումնական հաստատութիւններ են ռացուում Կ. Պոլսում, Իզմիր-րում, Տրիեստում եւ այլն)։ Ընդլայնուած են կրօ-նաստուածաբանական, մշակութային գործունէու-թեան շրջանակները, խորացում հայագիտական, բանասիրական, լեզուաբանական, թարգմանական աշխատանքները։ Ջարկ է տրուում գիտական, կրօնա-կան եւ մշակութային գրքերի լոյս ընծայմանը։ Հրա-պարակում են «Նւրուլը» շաբաթաթերթը, «Հանդես Մասրիկա» ամսագիրը։

Այս համառօտ անդրադարձն անգամ բաւական է նկատելու համար, որ վենետիկեան ճիւղաւորումից առաջացած Վիեննայի միաբանութիւնը Միսթար Սե-բաստացու աւանդոյթների շարունակողը դարձաւ։ Եւ ոչ թէ՛ ազատ, այլ վենետիկեան միաբանութեան հետ համաքայլ մնալով հարստացրեց մեր մշակութա-յին պատմութեան էջերը։

Երկուսն էլ Եւրոպայում գործող փառահեղ կենտ-րոններ էին։ Երկուսն էլ համայն հայութեանը հիաց-մունք, հպարտութիւն պատճառող շեղ գոյութիւն-ներ էին։ Միաբանութեան թէ՛ վենետիկեան, թէ՛ վի-եննական թեւերը տասնամեակներով չէ, հարիւրամե-ակներով անցնող իրենց ճանապարհը միայն մեծա-գործութիւններով նշանաւորեցին, որոնց մասին հա-տորներ են գրուել, բանաստեղծութիւններ ձօնուել, գեղանկարչական գործեր ծնուել, վաւերագրական ֆիլմեր նկարահանուել։

Երբ սկսուեց ճանապարհի խոտորումը, որ շե-ղումների պատճառով, բեկումնային ի՛նչ իրադար-ձութիւններից յետոյ։ Այդ մասին, թերեւս, նուազ տե-ղեկութիւններ կան։ Աւելի ստույգ այդ մասին ընդուն-ւած չէ բարձրաձայն խօսել։ Թապու է, որ խախտե-լու յանդգնութիւն ունեցողները (անձնական փորձից դիտեմ) կտամբանք-յանդիմանքի էին արժանա-նում։ Ինչպէս ժամանակակից մեծերից մէկն է գրում «գարմացի, որ գարմանամ», քանի որ իրականում հարցը ցաւի մղումով էր վերհանուում։ Նիւթական անգնահատելի արժէքներին, դարեւով կուտակուած ազգային ժառանգութեան տէր մնալու, հայրութեա-նը զգօնութեան կոչելու, օգնութեան ձեռք մեկնելու համար էր խնդիրը հրապարակաւ ներկայացուում։ Զթուարկեմք։ Այդ թեմային անդրադառնալն իմաստ էլ չունի։

Բայց կարեւոր մի հանգամանք կայ, որի վրայ ար-ժէ ուշադրութիւն հրաւիրել. ինչպէս յայտնի է, այս վերջին տարիներին Մուրաթ-Ռաֆայէլեան վարժա-րանը փակուել է։ Սակայն կրթօճախի հոյակերտ շի-նութիւնը, որ թէ՛ պատմական, թէ՛ ճարտարապետա-կան առումով բացառիկ արժէք ու նշանակութիւն ու-նի, դեռեւս Միսթարեան միաբանութեանն է պատ-կանում։ Ասում է՝ դեռեւս, որովհետեւ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու դէպքում հայերին պատկա-նող այդ եզակի շինութիւնը նոյնպէս կ'որստանա փտանգի տակ կը յայտնուի։ Մանրամասնութիւննե-րի մէջ չխորանանք, թէ՛ եւ այս մտաւարտութիւնը հիմ-նաւորող փաստեր կան։ Սակայն Ս. Ղազար կղզում կատարուած վերջին իրադարձութիւնները հիմք են տալիս յուսալու, որ խոտորուած ճանապարհը չտկե-նւ միջոցներ կը ձեռնարկուեն։ Իսկ իրադարձութիւն-ները նշանակալի էին, անգամ պատմական կոչուե-լու արժանի. աշնան սկզբին մեծ շուքով նշուեց Միս-թարեան միաբանութեան 300ամեակը։ Յորեկեանկան օտնակատարութիւններից առաջ կարեւոր մի փաստ էլ արձանագրուեց՝ Միսթարեանների երկու՝ Վենե-տիկի եւ Վիեննայի թեւերը վերամիաւորուելով դար-ձան միացեալ ընդհանրական միաբանութիւն։

Սա այնքան էլ անակնկալ քայլ չէր. դեռեւս 1992ին Վիեննայի Միսթարեանների արքահայր Պօղոս Բո-ճանեանն առաջին անգամ պաշտօնապէս ներկայաց-րեց վերամիաւորման առաջարկը։ Այդ շրջանի Վենե-տիկի միաբանութեան արքահայր Գէորգ Պալեանի գլխավորութեամբ շուրջ ութ ամիս տեւած բանակ-

ցութիւններից յետոյ վաւերացուեց համագործակցու-թեան մի բանաձեւ, որը սակայն անիմանալի պատ-ճառներով ընթացք չստացաւ։ 1999ի Յուլիսին Աւստր-րիայից ստացուած պաշտօնագրով Վիեննայի միաբա-նութիւնը կրկին վերամիաւորման խնդրանք է ներ-կայացնում։ 2000 թ. Յուլիսի 7ին վերջապէս ընդհա-նուր ժողովով վաւերացուած է երկու թեւերի վերա-միաւորման փաստը։ Վիեննայի միաբանութեանն առաջարկուած է միացեալ վարչակազմ ստեղծելու ծրագիր։ Ս. Ղազար կղզում գումարում է խորհրդ-դակցական համաժողով։ Երկու կողմերը միասին քննարկում են առաջիկայ ընտրութիւններին առնչ-չուող, կրթական, հոգեւոր - մշակութային, տնտե-սական եւ այլ խնդիրներ։

Այդ օրերին մինչեւ հիմա չարձանագրուած եւս մէկ անակնկալ է մատուցուում. երկու թեւերի երկու ա-բանները՝ հայր Պօղոս վրդ. Բոճանեանը (Վիեննա) եւ հայր Վարդան վրդ. Քէշիշեանը (Վենետիկ) միաժա-մանակ հրաժարական են ներկայացնում։ Այնուհե-տե երկու միաբանութիւնների միացեալ սահմանադ-րութեան համաձայն՝ ճշգրտուած է նաեւ արքահայ-րութեան պաշտօնավարութեան վեցամեայ ժամկէտը՝ մինչեւ 70 տարեկանը շարունակելու սահմանումով։

Վիեննայի թեւի համար սա նորութիւն էր, քանի որ այնտեղ ընտրուած արքահայրը մշտնջենաւոր էր։ Սակայն վենետիկեան թեւի համար նման կանոնա-կարգ գործել էր մինչեւ 1929 թ.։ Վեցերորդ արքա-հայր՝ Յովհան Աւգրեանի օրօք այս օրէնքը փոխ-ւում է՝ նախ 12 տարուայ, ապա (1991ից) վեց տա-րայ ժամկէտ է նախանշուում։ Նոր կանոնակարգի հա-մաձայն, Վիեննայի միաբանութեան մեծամասնութե-կան նշանակութեամբ նոյնպէս արքահայր տնտրու է կրելու։ Ինչ վերաբերում է ապագայ սաներին, ապա նրանք հոգեւոր բարձրագոյն ուսումը կարող են ստանալ ըստ ընտրութեան Վենետիկում կամ Վիեն-նայում։ Իսկ կոչումներ յանձնելու արարողութիւնը կատարուելու է Ս. Ղազար կղզում։

Վերամիաւորման հետ կապուած բոլոր խնդիրնե-րը կանոնակարգելուց յետոյ Միսթարեան միաբանու-թեան նոր արքահայր է ընտրուում։ Մենաստանից հնչող զանգերի ղողանջները տարածուած են Ադրիա-տիկի վրայ, որի «ամենազարմանահրաշ» անուան-ւած կղզում, Ս. Ղազարի մայրավանք եկեղեցում կա-յացաւ 15րդ արքահայր՝ Եղիա վրդ. Քիլադպեանի թա-գադրութիւնը։

Այսպէս՝ Միսթարեան միաբանութեան կենսագ-րութեան մէջ նոր փուլ է սկսուում։ Վերջին տասնամե-ակներում առկա տագնապներին տեղեակ, Ս. Ղա-զար կղզու ապագայով մտահոգուած մարդիկ, ան-շուշտ, այս իրողութեան հանդէպ անտարբեր մնալ չեն կարող։ Բնական է, որ այս առիթով հայաստակա-ն կարծիքներ ու տեսակէտներ էլ են արտայայտուում։ Սակայն լաւանստութիւնը յորդողութեան գրաւական դառնալու խարխիւ է եւնիւրում։ Այս դիրքերից է փաստը գնահատում Խաչիպաւում Հայաստանի արտա-կարգ եւ լիազոր դեսպան Գաղիկ Բաղդասարեանը։

- Այսպէս պիտի լինէ։ Մա անխուսափելի, անհրա-ժեշտ, նաեւ պարտադրուած քայլ էր։ Գաղտնիք չէ, որ երկու միաբանութիւններն այլեւս նախկին հօ-րութեամբ չէին գործում։ Առանց իմանալու, թերեւս, չկարողանային իրենց գործունէութիւնը շարունա-կել։ Միմեանցով զօրանալու պահանջը կար։ Ամրա-նալու փորձը, բնականաբար, գոյատեւածն հաւանա-կանութիւնը մեծացնել է նշանակում։ Նախ՝ միաբա-նութիւնն իր շարքերը երիտասարդ ուժերով համալ-րելու պահանջ ունի։ Ցայտնի է, որ այսօր Վենետի-կում 20, իսկ Վիեննայում 12 միաբաններ կան, որոնց միջին տարիքը 60 - 70ի սահմաններում է ց տասնա-ւում։ Բայց միաբանութեան կազմը ոչ միայն երիտա-սարդ ուժերով, այլեւ իսկական նուիրեալներով թար-մացնելու անհրաժեշտութիւն ունի։ Ուրեմն ճիշդ ընտրութիւն պէտք է արուել։ Ցատկապէս Հայաստա-նից սաներ ընդունելիս լաւ կը լինի, որ հաշուի առ-նուէր կարեւոր մի հանգամանք բանակից խուսափե-լու է, թէ իսկապէս գործին ծառայելու նպատակով են նախընտրել այդ ուղին։

Այս վերջին տարիներին, ինչ է, ազգովին անհա-ւատ դարձանք։ Միսթար Սեբաստացու գործի հրաշքն այն էր, որ ոչ միայն գիտնականներ, այլեւ ազգին ծառայող, բարձր նկարագրի տէր անհատներ էին պատրաստում։ Դարեր շարունակ գործել են «կրօնը ծառայում է ազգին» նշանաբանով։ Այս հիմ-նական աւանդութիւնը վերականգնելով է հնարաւոր բացթողումները չտկել։ Մանաւանդ որ Սփիւռքի, նա-եւ հայրենիքի հետ համագործակցելու բոլոր նպաս-տաւոր պայմանները կան։ Խորհրդային կարգերի ժա-մանակ հայրենիքի հետ կապերն աւելի շատ հոգեւոր էին։ Հիմա իրավիճակը փոխուել է։ Հիմա Խաչիպաւում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը կայ, որը ծրագրեր փաթեթ է ներկայացրել միաբա-նութեանը համատեղ իրականացնելու համար։ Խնդիրներ կան, որոնք միայն խաչապաւ համայնքի ուժերով դժուար է իրականացնել։ Ուրեմն համայն հայութեան եւ Հայաստանի Հանրապետութեան օժանդակութիւնն ու գործուն մասնակցութիւնն էլ է պահանջում իրավիճակը կանոնակարգելու հա-մար։ Վստահ եմ, որ վերամիաւորուելով Միսթար-եաններն աւելի մեծ հաւատով կը նուիրուեն գործին եւ իրենց կոչմանը հաստատ կը մնան։ Ցանկութիւն, նաեւ շարչարանք է անհրաժեշտ միաբանութեանը բնորոշ գործելակերպը, աւանդոյթները, ուրեմն եւ Միսթարեանների երբեմնի փառքը եթէ ոչ լիովին, ապա գոնէ մասամբ վերականգնելու համար։

Գուցէ իրօք վերամիաւորումով վերականգնուելու է այն կառոյցը, ուր «կարգութեանը, մաքրութիւնը, անուշահոտութիւնը եւ իրական բարեպաշտութիւնը, տաղանդն ու ճշմարտութիւնը, որ բնորոշ են հայկա-կան կղզու վարդապետներին, միանգամայն ի վիճա-կի են աշխարհիկ մարդուն ապացուցելու, որ գոյու-թիւն ունի մէկ այլ աշխարհ, որը շատ աւելի լաւն է, քան մերը»։ Ս. Ղազար կղզու Մենաստանի հանդէպ ծորճ Պայրընի այսօրինակ խանդավառութեամբ կրկին համակուելու օրերը գուցէ դեռ առջեւում են։ Ո՛վ գիտի։ Զէ՛ որ ամենամեծ որոշիչը ԺԱՄԱՆԱԿն է։

ՌՈՒԶԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ

«Հայեացք Երեւանից», Իւլ 12, Դեկտեմբեր 2000

հարցապրոց

«ԿՈՐՔԻԻ ԹԱՔՈՒՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԱՐՉԱԳԱՆԳՆ Է ԹԱՔՈՒՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ»

Կ'ԸՍԻ ՆՈՒՐԻԶԱ ՄԱԹՈՍԵԱՆ

Կերացապաշտ արտայայտչապաշտ գեղանկարիչ Արշիլ Կորքեի կոթողային կենսագրությունը «Պլեք Էնճըլ»ի հեղինակը՝

Նուրիծա Մաթոսեան այս շաբաթավերջին բեմական մենախօսութեամբ մը պիտի մատուցէ իր գիրքը (հրատարակուած՝ 1998ին)։ Անգլիահայ գրագիտուհին 20 տարի ուսումնասիրած է Կորքեի կեանքը, հարցազրոյցներ կատարած է անոր ազգականներուն եւ բարեկամներուն հետ եւ պատմութեան պատուանդանին վրայ բարձրացուցած է Հայկական Յղաճապանութենէ վերապրած տարագիր գեղանկարիչը՝ պեղելով անոր արւեստին ետին թաքնուած տառապանքն ակունքները։ Նուրիծա Մաթոսեան Կորքեի կեանքը կը վերականուցէ անոր մօր, քրոջ, սիրուհիին եւ կնոջ տիպարներուն ընդմէջէն, ինչպէս նաեւ՝ աւելի քան 100 սահիկներու ցուցադրութեամբ։ Անոր բեմական մատուցումը շուրջ մէկ ժամուան մէջ կը խտացնէ 20րդ դարու ամենէն խորհրդաւոր հայ գեղանկարիչին կեանքն ու գեղանկարչութեան ճանապարհը։ Ելոյթները տեղի կ'ունենան «Թեատր Սոն»-ի մէջ 5, 6 եւ 8 Մայիսին (առաջին երկուքը՝ անգլերէնով, իսկ երրորդը՝ հայերէնով)։ Այս առիթով «Ազդակ»-ե-նամակով հարցազրոյց մը կատարեց բազմատաղանդ գրագիտուհիին հետ։ Ստորեւ ամբողջութիւնը՝ թարգմանաբար (անգլերէնէ)։



ՀԱՐՑՈՒՄ. Յետադարձ ակնարկով մը ի՞նչպէս կը բացատրէք Արշիլ Կորքեի կենսագրութիւնը գրելու ձեռք որոշումը։

ՊԱՏԱՄԱՆ. Կորքեի կենսագրութիւնը որոշեցի գրել, երբ յաղթահարեցի այն սարսափը, թէ՛ կարելի չէր արդարօրէն ուսումնասիրել զայն։ Որոշումը պահանջի արդիւնք էր։ Կ'ուզէի կարդալ Կորքեի կենսագրութիւն մը, որուն կրնայի վստահիլ։ Առաջին անգամ անոր գեղանկարները տեսնելուս եւ անոնց սիրահարելուս միջեւ գրեցի Ձեռագիրի կենսագրութիւնը։ Դժուար գործ մը, որ տասը տարուան ուսումնասիրութիւն պահանջեց եւ փորձառութիւն մը եղաւ ինծի համար։ Սակայն տակաւին ոչ մէկ գիրք հրատարակուեցաւ Կորքեի մասին, եւ անոր այրին ինծի առաջարկեց կենսագրութիւն մը գրել։ Պատուէր կարճ մենագրութիւն մըն էր, որ վերածուեցաւ 1300 էջանոց ձեռագրի մը։ Հարկ էր ամփոփել զայն 700

էջերու մէջ։ Պատասխան է՝ բառ առ բառ եւ քայլ առ քայլ։

Հ.- Նկատի ունենալով, որ բազմաթիւ մուր, հակասական եւ նոյնիսկ սխալ ապացոյցներ կան Կորքեի չարաբալից կենսքին վերաբերեալ, ի՞նչ քաջութիւն ձեզ մ'ղեց ժխտելու սխալ ենթադրութիւնները եւ համոզիլ զի յիշգրգներգութեամբ մը վերականուցելու անոր ուղեւորութիւնը 20րդ դարու պատմութեան եւ արւեստին ամենէն փոքրակալից տարիներուն ընդմէջէն։

Պ.- Կորքեի կեանքը վերակազմեցի երեք ուղղութեամբ։ Ճիշտ փազըլի մը պէս։ Կարգ մը բաժիններ պարզապէս չէին տեղաւորուեր։ Հետեւաբար պէտք էր շարունակէի հարցուփոխել, մինչեւ որ պատասխաններ գտնէի։ Երեւանի մէջ Կորքեի ազգականներէն մէկը գծեց անոր գիւղին քարտէսը։ Թասքըն Արիգոնայի մէջ արուեստագիտուհի մը առաջին անգամ ըլլալով ինծի պատմեց Կորքեի ինքնաշարժի արկածին մասին. ան նոյն ինքնաշարժին մէջ եղած էր։ Սառապրուքէնի հետ հեռաձայնային հաղորդակցութենէ մը իմացայ Քրիսթին Բրաթթի մէջ իր անձնասպանութենէն առաջ Կորքեի արտասանած վերջին խօսքերը։ Կորքեի կինը չէր կրնար այս բոլորին մասին պատմել ինծի, որովհետեւ հոն եղած չէր։ Հարկ էր իրականութիւնը սակայն Կորքեի բարեկամներէն եւ աշակիտի մարդոցմէ, որոնք յետին նպատակներ չուէին։ Այս միջոցին մեծ սուտերը եւ Կորքեի տիպարին աղաւաղումը զիս մղեցին աւելի վճռականօրէն յայտնաբերելու ճշմարտութիւնը ոչ միայն ինծի, այլ նաեւ իրեն համար, որովհետեւ անոր գեղանկարներուն եւ աշխատանքներէն մէջ կար բան մը, որ կը թախանձէր ընել այդ։ Կորքեի ինծի վստահուած էր։ Անոնց հետ, որ կը գրուէին ինծի կ'ըսէին, թէ պէտք էր գրէի Կորքեի կենսագրութիւնը։ Ոմանք նոյնիսկ կը ստիպէին խոտանալ։

Հ.- «Պլեք Էնճըլ»ը արդի հայ գեղանկարչի մը շատ յաջող մէկ կենսագրութիւնն է, միաժամանակ՝ Հայկական Յղաճապանութեան ցնցիչ պատմութիւն մը։ Բազմաթիւ քննադատներու ուշադրութեան չէ վրիպած այս կրկնակի իրադարձումը։ Անշուշտ գրագետի տաղանդ ունի իր դերը։ Սակայն, իբրեւ այս առիթընդ գիրքին հեղինակը, ի՞նչպէս կը բացատրէք անոր յաջողութեան գաղտնիքը երկու մակարդակներու վրայ։

Պ.- Կորքեի նիւթը ընտրած եմ, որովհետեւ անիկ կը պարունակէ գոյգոյ գիպարք մը՝ անհատական եւ տիեզերական մակարդակի վրայ։ Կորքեի կեանքը կը խորհրդանշէ աւելի լայն տարողութեամբ պատմած դէպքեր, իսկ անոր թաքուն ինքնութիւնը արձագանգն է թաքուն ցեղասպանութեան։ Ե՛ս այլ աքսորեալ մըն եմ եւ կը հասկնամ, թէ ի՞նչ կը նշանակէ տեղահան ըլլալ եւ կորսնցնել պատմութիւն ու ժառանգութիւն, նիւթական թէ բարոյական առումով։ Գրելը որեւէ բանէ աւելի կը նմանի դերասանութեան։ Հարկ է վերածուիլ տիպարին եւ զգալ ինչ որ ան զգացած է։ Վերջապէս, թեան յաջողեցայ ապրել Կորքեի մէջ, այնպէս՝ ինչպէս կրնա՞մ կրնալ ապրել տղամարդու մը մէջ։ Սակայն Կորքեի կիներով չըջապատուած եւ անոնց հոգածութեամբ աճած մարդ մըն էր։ Իդականութեան նկատմամբ անոր զգացողութիւնը շատ մշակուած էր։ Անոր ամէնէն հաշտաւոր գեղանկարը կը պատկերէ անոր մայրը։ Նոյնիսկ այսքան տարի ետք եւ 40 ներկայացումներ տալէ ետք, երբ կը կարդամ անոր անձնասպանութեան մասին, արտասուելու չափ կը յուզուիմ։ Է՛մ կրնար գոպնի բուռն զգացումներս։

Հ.- Ձեր ընտանիքը ցեղասպանութեան ենթարկուած է։

Պ.- Այո, ծնողներս տեղահան եղած են եւ անոնց ծնողները ամէնէն սովորական ձեւով մեզի պատմած են իրենց տառապանքն մասին։ Սարսափելի էր՝ կ'աղաչէի, որ լռէին։ Սակայն այժմ երախտապարտ կը զգամ, որ անոնք ուժը ունեցան խօսելու եւ ոչ թէ սառեցնելու իրենց յիշողութիւնը։

Հ.- Ի՞նչպէս յայտնաբերած եւ դիմագրւած էք յիշողութիւնը։

Պ.- Երբեք չեմ գրած իմ մասին, բայց թերեւս ժամանակը եկած է։

Հ.- Ձեր ժառանգած ցեղասպանութեան յիշողութիւնը ի՞նչպէս կը դրսեւորուի «Պլեք Էնճըլ»ի մէջ, նկատի ունենալով, որ Կորքի եւ ձեր ծնողները կու գան հայկական բռնագրաւուած հողերէ։

Պ.- Ես վանեցի չեմ, սակայն շատ աւել-

լի բան գիտեմ վանի, քան թէ մօրենական մեծ մօրս ծննդավայր Կեսարիոյ կամ հօրենական մեծ հօրս ծննդավայր Այնթապի մասին։ Հօգօր զգացում է քաղաք մը եւ ամբողջ ընկերութիւն մը վերստեղծելու կարողութիւնը։ Հետեւաբար, դէպի վան ուղեւորութիւնը տեսակ մը վերադարձ էր, երբ արեւամարին կը քալէի վանայ բերդին պատերուն վրայ եւ գտայ այժմ թրքական անուն մը կրող անտաշ ու փոքրիկ այն զուգը, ուր ծնած էր Կորքի. գայն ճանչցայ անոր գարմիկին նկարագրութենէն։ Ձեռքս այնքան կը դողար, որ չէի կրնար անշարժ պահել լուսանկարելու համար եւ ստիպուած էի ուղեցոյցէն՝ Արմէն Արոյեանէն խնդրել, որ վիտեոյի արձանագրէր։ Անկաւարդելի է փուլզումի ուժեղ զգացումը այն բոլորին դիմաց, որ կորսնցուցած ենք, այդ հարուստ բայց անմշակ վառելահողերուն ամալութեան, աւերակ դարձած հրաշալի գիւղաքաղաքներուն եւ գեղեցիկ ճարտարապետութեան դիմաց։

Հ.- Եզակի երեւոյթ է տեսնել գրագետ մը, որ բեմական մենախօսութեամբ կը ներկայացնէ իր գիրքը։ Ի՞նչ բան ձեզ մ'ղեց բեմ բարձրացնելու «Պլեք Էնճըլ»ը եւ ի՞նչ կ'ուզէք փոխանցել այս մատուցումով։

Պ.- Թատրոնը միշտ ներգրաւած է զիս, եւ թատերական որոշ կրթութիւն ունիմ։ Պատանկութեան այցելած եմ Նոր Զուգը, ուր թէ՛ յատուկութեամբ մէջ պատմութիւնը կ'աւարդած են զիս, եւ մտածած եմ, թէ վիպասանութիւնը ամէնէն ամբողջական արուեստն է։ Քէթի Պէրպէրեան լաւագոյն բարեկամուհիս էր. յաճախ դիտած եմ անոր ներկայացումները եւ բազմաթիւ առիթներով դերեր կատարած եմ անոր հետ։ «Պլեք Էնճըլ»ը մարդոց ուշադրութիւնը կը գրաւէ իր պատմութիւն մը պատմելու բնոյթով, մասնաւոր՝ սկիզբի բաժինին մէջ։ Մտածեցի, որ փոխանակ գիրքս սահիկներով եւ սովորական դասախօսութեամբ մը ներկայացնելու Լոնտոնի Ռոյալ Քալէն ճի Արթի մէջ, կրնայի պատմութիւններով մատուցել զայն, Կորքիին պէս։ Ապա օր մը բեմադրիչս ըսաւ. «Նուրիծա շատ տարօրինակ է, բայց երբ կը խօսիս, ճիշդ Կորքի մօր կը նմանի»։ Կրնաս «ան» դերասանին փոխարէն «ես» գործածել։ Կորքի սիրած կիները ինծի փոխանցած են անոր պատմութիւնը եւ հիմա իմ մէջէս կը վերագտնեն իրենց ձայնը՝ Կորքին վերստեղծելու համար։

Հ.- «Պլեք Էնճըլ»ի բեմական մատուցումը ի՞նչ նշանակութիւն ունի ձեզի համար։ Առիթով մը նշած էք, թէ անկազ զգացականօրէն սպառիչ է...

Պ.- Բեմական այս մենախօսութիւնը կը նշանակէ զգացական կապի մէջ ըլլալ ընթերցողներուն հետ, որոնք այլապէս անկերպարան են եւ անխօս։ Կը նշանակէ անոնց մատուցել աւելի կերպարանաւորուած եւ ուղղակի փորձառութիւն մը, ուր անոնք պատահածին սակաւատեսները կը դառնան։ Արուեստագէտ Ուիլ Պրանթ, որ Կորքիի բարեկամն էր Նիւ Եորքի մէջ եւ անոր թոռը՝ Լիպի «Պլեք Էնճըլ»ը լսելէ ետք ըսին. «Այնքան ճշմարիտ էր մատուցումը, որ մեզի յիշեցուց բազմաթիւ դէպքեր, զորս իրապէս ապրած էինք»։ Յնուեցայ, երբ անդրադարձայ, թէ անոնք կ'ակնարկէին իրական յուշերու եւ ոչ թէ՛ պարզապէս պատմութեան մը, որ գիտէին։ Բեմական մենախօսութիւնը սպառիչ է ինծի համար, որովհետեւ զայն կը կատարեմ սրտով, ամէնէն ուղղակի ձեւով, որ կրնամ։ Դերասանական քեքնիքներ չեմ գործածեր, այլ պարզապէս պատմութիւն մը կը պատմեմ, հուժ նիւթի պէս։

Հ.- Բեմական մատուցումը գրեթէ անդին ի՞նչ կրնայ իրագործել։

Պ.- Պարզապէս բեմը կը լեցնէ Ֆիգիբական տարածք մը եւ տիրական է։ Թատերական մատուցումը նաեւ ժամանակը կը լեցնէ այնպիսի ձեւով, որ գիրքի մը ուժէն վեր է։ Բեմական մատուցումը կ'ընձեռէ հաւաքական փորձառութիւն մը, զոր կը բաժնեն հանդիսատեսները եւ կատարողը։ Միակական տարը առկայ է այստեղ. բեմական կատարումը իրեն յատուկ ուժ մը ունի, մինչդեռ միշտ ալ կարելի է փակել գիրք մը եւ գայն դարձաւ բանալ մեր ուզած պահուն։ Գիրքի մը բեմական մատուցումը կը մղէ, որ հանդիսատեսը մէկ ժամուան ընթացքին փորձառութիւնը ապրի կեանքի պարբերաշրջանի մը՝ իր բոլոր վերիվայրումներով։

Հ.- Տարբեր հանդիսատեսներ ունեցած էք Լոնտոնէն մինչեւ Էտիոպիա, Լոս Անջելես եւ Երեւան։ Ի՞նչպէս կ'արժեւորէք այլազան ունկնդիրներու հետ ձեր փորձառութիւնը եւ ինչպիսի ընկալումի արժանացած էք։

Պ.- Հանդիսատեսներ իրենք ըսած են, թէ սկիզբը շատ հաճելի եւ տպաւորիչ դուրս եւ բեմական մատուցումը, իսկ պատմութիւնը ցնցած է գիրքը։ Անոնք հաճելի կը գտնեն բեմական կատարումը՝ անոր պարզութեան եւ սահիկներով ցուցադրուած պատկերներուն հարստութեան պատճառով։ Ոչ ոք պիտի կարենար տեսնել Կորքիի գեղանկարները եւ անոր արխիւային պատկերները՝ առանց չընելու աշխարհի տարածքին. իսկ ես կը ներկայացնեմ այդ բոլորը։ Կարգ մը հանդիսատես-

ներ ուրիշներէ աւելի կը տպաւորուին։ Ամէնէն երկտրականացնող հանդիսատեսներուն հանդիպած եմ հաւանաբար Երեւանի մէջ, ուր ինծի կը թուէր, թէ կը խօսէի իրենց առօրեայ կեանքին մասին։ Որեւէ տեղէ աւելի արտասուելու եւ խնդուելու ձայներ լսեցի Երեւանի մէջ։ Ներկայացումը տեւեց երկու ժամ, առանց դադարի, որովհետեւ հայերէն եւ անգլերէն տարբերակներով կ'ընթանար, սակայն կարկտան չէր, իսկ հանդիսատեսներուն կեդրոնացումը հայերի նման յստակ էր, հսկայական լիճի մը արտացոլացումին պէս։ Անոնք իրենց սրտեւրուն մէջ ընդունեցին Կորքին, որովհետեւ զգացին, թէ ան իրենց կը պատկանէր. գայն կը վերադարձնէի իրենց, Հայաստանի մէջ։ Կորքին իրենց իրականութիւնն էր։

Հ.- «Պլեք Էնճըլ»ի ազդեցութեան ծիրը լայն է։ Արդեօք անկա որեւէ փոփոխութիւն յարաբերուած է արուեստի միջազգային շրջանակներու մէջ Կորքի արժեւորմանի եւ ըմբռնումի մէջ։

Պ.- Այո, «Էնճըլ»ը շրջանակները Արթ Նիւուզփէյփլը»ի մէջ կարողացի, թէ ամերիկեան բազմաթիւ թանգարաններ անցեալ տարի Կորքի գործերը գնած են։ Թերթը այս երեւոյթը ամբողջութեամբ կը վերագրէ «Պլեք Էնճըլ» գիրքին։ Նաեւ կը նկատեմ, թէ զայն սկսած են կոչել «հայ գեղանկարիչ», նոյնիսկ «հերոսական հայ գեղանկարիչ»։ Լուրջ վերաբերուած մը տեղի կ'ունենայ։

Հ.- «Պլեք Էնճըլ» դեպի ո՞ր կ'ուղղուի։ Մրցախմբեր կա՞ն գայն ժապաւենի վերածելու։

Պ.- «Պլեք Էնճըլ»ի առնչուող բազմաթիւ ծրագրերն են, սակայն տակաւին որեւէ բան չեմ կրնար յայտարարել։ Անշուշտ գիտեմ, թէ Ազոմ էկոյեան այս սերունդը կ'ապտրաստէ «Արարիկ» վերնագրով ժապաւեն մը, որ նուիրուած է Հայկական Յղաճապանութեան։ Ան ըսած է, թէ ժապաւենին «ներշնչումը» կու գայ «Պլեք Էնճըլ»էն։

Հ.- Ցեղասպանութիւնը հօգօր ազդեցութեամբ յիշողութիւն մըն է, որ կը փոխանցուի սերունդէ սերունդ։ Այս օրերու շատեր մղուած են աշխարհին յիշեցնելու, թէ ի՞նչ պատահած է իրենց պապերուն։ Արուեստն ու գրականութիւնը իբրեւ միջոց կ'օգտագործուին Հայկական Ցեղասպանութեան պատմական ճշմարտութիւնը յայտնաբերելու համար։ Պատկերասրահներու մէջ ցուցադրուող գործեր, դասական կամ ողբ ստեղծագործութիւններ եւ մանաւանդ անգլերէնով գրուած վէպեր Հայկական Ցեղասպանութեան բնաբանը կը զարգացնեն։ Գործը մը իրական եւ անողիչ ըլլալու համար ի՞նչ յատկանիշներ պէտք է պարունակէ։ Ի՞նչ է վստմգը կամ նկատելի միտումով, անտարբերութեամբ եւ կեղծաւորութեամբ յատկանշուած աշխարհի մը մէջ։

Պ.- Ճշմարտութիւնը միշտ ալ իրական կը թուի երեւակայական կամ ոչ երեւակայական գործերու մէջ։ Կ'ենթադրեմ, որ յաջողութեան բանալին մանրամասնութիւններու մէջ խորանալն է, քան թէ՛ ընդհանրացումներ կատարելը։ Անշուշտ ասիկա չի նշանակեր ընկերաբանութիւն կամ փիլիսոփայութիւն գրել։ Կենական է ճշգրիտ տեղեկութիւններու փոխանցումը։ Հարկ է մանրամասնօրէն ուսումնասիրել, ապա գրել՝ ձեռք սրտին։ Շատ յուզիչ կը գտնեմ, երբ բոլորովին անմասթ մը, որ որեւէ կապ չունի մեր պատմութեան հետ «Պլեք Էնճըլ»ը կարգալէ կամ անոր բեմական մատուցումը լսելէ ետք կրնայ ընդունիլ, թէ յանգաւոր կը գալ իր անդիտութեամբ, կամ կը պատմէ իր զգացումներուն մասին։

Պատասխանելու համար հարցումին, կարելի է ըսել, որ ճշմարտութիւնը նիւթը գտնելու մէջ է. գտնել նիւթ մը, որ կը թրթռացնէ, կը խնդացնէ եւ կը լացնէ։ Միայն անկէ ետք կարելի է ցնցել նաեւ ուրիշները։ Գիտական ապացոյցներով համոզելու փորձը երբեք բաւարար չէ։ Վստմգը ապարդիւն աշխատանքն է եւ ձեր նշած հակազգացութիւնները։ Այսուհանդերձ արդիւնքի չես հասնիր առանց վստմգներ դիմադրուելու։

Հ.- Վերջերս Լոնտոնի մէջ կազմակերպեցիք 12 ժամ տեւողութեամբ ընթերցանութեան ձեռնարկ մը՝ նշելու համար Ֆրանսայի կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը եւ վերաբարձեցնելու համար յիշողութիւնը. այն օրը, երբ Բրիտանիա կ'ոգեկոչէր Հրեական Ողջակիցումը. Հայկական Ցեղասպանութիւնը անտեսելու ծրագրուած քաղաքականութեամբ։ Այս առիթով նաեւ յօդուած մը ստորագրեցիք «Տի ինտիմենթըթ»-ի մէջ եւ բրիտանական թերթեր ձեր խօսքերը մէջբերեցին՝ ձեզ ներկայացնելով իբրեւ «գործիչ»։ Ի՞նչպէս կը բացատրէք ձեր գործունէութիւնը։

Պ.- Ընթերցանութեան ձեռնարկը կազմակերպեցի ներշնչումի պահուն մը։ Իբրեւ գրա-

Ծարը՝ էջ 8

Հարցազրոյցը վարեց
Լ. ԿԻՒՆՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Sponsored by IDOL

Black Angel

The Double Life of
Arshile Gorky

A Mesmerising Solo Performance with
100 images and music by
Nourtza Matossian

story of a poignant diaspora
Brian Morton, BBC Scotland

HAMAZKAYIM CULTURAL & EDUCATIONAL SOCIETY
IN COLLABORATION WITH MONOT THEATRE

●Շաբաթ, 5 Մայիս 2001, երեկոյեան ժամը 8:30ին (անգլերէն)։
●Կիրակի, 6 Մայիս 2001, երեկոյեան ժամը 8:30ին. (անգլերէն)։
●Երեքշաբթի, 8 Մայիս 2001, երեկոյեան ժամը 8:30ին (հայերէն)։

MONNOT ԹԱՏԵՐԱՍՐԱՇԻՆ ՄԷՋ
(ՍԷՆ ԺՈՂԷՖ ԽԱՄԱՆԱՐԱՆԻ ՓՈՂՈՑ)
ՆԱԷԻ ՑՈՒՑԱՂՈՒԹԻՒՆ
ԼՈՒՍԱՆԱԿԱՆՔԵՐԻ
ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ

●Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել 01-202422, 03-305233, 03-665111 եւ 03-333190 եւ ելոյթի օրերը կիշէն։



ԾԱՏՐԱԿ

ԿԱՐԵՆ ԱՍՐԵԱՆԱՐԺԱՆԱՅԱԻ ՏՈՒՊԱՅԻՄՐՅԱՇԱՐՔԻ ՏԻՏՂՈՍԻՆ

Ճատրակի հայաստանցի վարպետ Կարէն Ասրեան շաեեցաւ Ճատրակի Տոպայի միջալգային բաց մրցաշարքի տիտղոսը, երբ 9րդ եւ վերջին հանգրուանին հաւասար կէտեր ձեռք ձգած 7 վարպետներու մէջ ունեցաւ *թեքնիքը*՝ առաւելութիւն։ 7 վարպետները (ներառեալ Ասրեան), ունեցան 6.5ական կէտ։ Ռուս Մոթիլեւ Ալեքսանտր հռչակուեցաւ երկրորդ, իսկ հայաստանցի Արտաշէս Մինասեան՝ երրորդ։ Մրցաշարքի նախօրեակին տիտղոսին գլխաւոր թեկնածուն նկատուող հնդիկ Քունթէ հանդիսացաւ 18րդ։

Մեծ պարգևը հաւասարապէս բաժնուեցաւ սակայն 7 վարպետներուն միջեւ։

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՖԻԼԱՏԵԼՖԻԱ – ԻՆՏԻԱՆԱՄ 2–1

Էն. Պի. Էյ.ի *փլէյօֆի* մրցումներուն, շաբաթավերջին տեղի ունեցան 4 հանդիպումներ։ Արեւելեան շրջանին մէջ Ֆիլատելֆիա 76րդ յաղթեց Ինտիանա Փէյսըրփի՝ 92–87 (2–1), իսկ Օրլանտօ Մեճիք պարտութեան մատնեց Միլուոքի Պաքսը՝ 121–116 (2–1), լետ երկարածրգման։ Արեւմտեան շրջանին մէջ, Տայաս Մէվըրիքս 94–91 պարտութեան մատնեց Եուրա ձէւլը (2–1), իսկ Միննետոթա Թիմպըրվուլփ – Սան Անթոնիօ մրցումը աւարտեցաւ 93–84 (2–1) արդիւնքով։

ՔԱՆԱՏԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ...

Շարունակուած Ա. ԷջԼԾ

Ներկայացուցած են եւ ուրիշներ առաջարկած են երկարածգել քննարկումները մինչեւ որ Ասատուրեանը կարենաւ մասնակցիլ նիստին, սակայն խորհրդարանի նախագահ՝ մերժած է բոլոր առաջարկները եւ բանաձեւը հանած օրակարգէն։ Թերթին համաձայն տեսականօրէն Ասատուրեան կրնայ կրկին ներկայացնել բանաձեւը։ Աղբիւրներ գրածանք յայտնած են, թէ ինչու Ասատուրեան ժողովին ներկայ չէ գտնուած։

Անգարայի մէջ Քանառայի դեսպանատունը յայտնեց, որ իրենք տեղեկ չեն, թէ ինչու Ասատուրեան ներկայ չէ գտնուած նիստին։

Ասատուրեանի բանաձեւի կողքին ծերակուտական Շերիլ Մահիւ նմանօրինակ այլ բանաձեւ մը ներկայցուցած է Ծերակոյտին։ Մահիւի բանաձեւը կը քննարկուի Ծերակոյտին մէջ։ Այդ բանաձեւին մէջ կը նշուի. «ա.- Ծերակոյտը կոչ կ'ուղղէ Քանառայի կառավարութեան, որ ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը եւ դատապարտէ պատմական ճշմարտութիւնը ուրանալու կամ խեղաթիւրելու որեւէ փորձ, որ մարդկութեան դէմ այդ ոճիրը ցեղասպանութենէ նուազ կը նկատէ, բ.- Իւրաքանչիւր տարւան Ապրիլ 24ը Քանառայի տարածքին հռչակէ իբրեւ 20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ գացած 1,5 միլիոն հայերու յիշատակման օր»։

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ...

Շարունակուած Ա. ԷջԼԾ

Նախագահական պալատի տեղեկատուական զրասենեակը այս առիթով հրապարակեց Լիբանան – Հայաստան յարաբերութեանց մասին տեղեկագիր մը, որուն մէջ հաստատեց, թէ երկու երկիրներու տնտեսական, քաղաքական, մշակութային եւ մարդասիրական յարաբերութիւնները Սակայքայլ յառաջդիմութիւն արձանագրած են Մարտ 1992էն, այսինքն՝ Հայաստանի անկախացումէն միայն մէկ տարի ետք, երկու երկիրներուն միջեւ ստորագրուած դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման համաձայնագիրէն ետք։

«1994ին Նաքբաշի մէջ բացումը կատարուեցաւ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան», նշեց տեղեկագիրը, յիշեցնելով նախագահ Քոչարեանի Փետրուար 2000ին Պէյրութ այցելութիւնը։

Նախագահ Լահուտն եւ տիկին Անտրէ Լահուտ պաշտօնական պատուիրակութեան ընկերակցուութեամբ Զորքըաթթի կէսօրին պիտի ժամանեն Երեւանի Զուարթնոց օդակայան, ուր գիրենք պիտի դիմաւորեն նախագահ Քոչարեանը, Հայաստանի առաջին տիկինը եւ բարձրաստիճան պաշտօնատարները։ Երկու նախագահներու ժողովէն ետք անոնց պիտի միանան երկու կողմերէն պաշտօնատարները, ապա պիտի ստորագրուին գործակցութեան համաձայնագրեր։ Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան ճաշկերոյթ մը պիտի տայ ի պատիւ լիբանանեան պատուիրակութեան, որ պիտի այցելէ Միծեռնակաբերդ, այնուհետեւ պատուոյ հիւրը ըլլալու նախագահ Քոչարեանի տալիք ընթրիքին։

Հինգշաբթի օր Հայաստանի վարչապետին հետ տեսակցութենէ ետք, նախագահ Լահուտ պիտի այցելէ Ս. Էմինածին, տեսակցութիւն մը ունենալու Գաբգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին հետ։

Նախագահ Քոչարեանի հետ երկրորդ դռնփակ հանդիպումէ մը ետք, նախագահ Լահուտ եւ լիբանանեան պատուիրակութիւնը պիտի մեկնին Ռումանիա։

Այցելութեան երկու օրերուն տիկին Անտրէ Էմիլ Լահուտ պիտի այցելէ ընկերային եւ մշակութային հաստատութիւններ։

ՖՈՐՄԻՒԼԱ /

ՇՈՒՄԱԽԸՐ ԲԱԽՏԱՌ՞Ր, ԹԵ ԸԱՔԻՆԵՆ ԱՆԲԱԽՏ...

Յորմիւյա ի աշխարհի ախուբանութեան Տրդ հանգրուանը՝ Սպանիոյ (Պարսելոնա) *կրան փրին* երէկ եղաւ հետաքրքրական եւ տուաւ անսպասելի արդիւնքներ։ Խօսքը չի վերաբերիր տիտղոսակիր գերմանացի Միքայէլ Շումսխըրի (*Ֆեռաքի*), ոչ ալ ֆիլանտացի Միքա Հաքինէի (*Մաքլարըն*) միջե տեղի ունեցած պայքարին եւ մէկուն բախտաւոր ու միւսին անբախտ ըլլալուն մասին, այլ երկրորդէն չորրորդ դիրքերուն, որոնք գրաւեցան յաջորդաբար քուլմպիացի Խուան Փալլօ Մոնթոյայի, քանաւացի Ժաք Վիլնէօվի (*ՊԱՐ*) եւ իտալացի Եարնօ Թրուլլիի (*Ճորտըն*) կողմէ, քան մը, որ ոչ մէկը կրնար ակնկալել մրցումին նախօրեակին...

Վերադառնալով առաջին դիրքին, գլխաւոր հարցումը հաւանաբար այն պիտի ըլլայ, որ երէկ Շումիւ նը բախտաւորը, թէ Հաքինէնր անբախտը...

Մրցումին մինչեւ վերջին *լէփը* ու միայն աւարտին քանի մը հարիւր մէքր մնացած, Միքա Հաքինէն պարագլուխի դիրքին վրայ երբ կը պատրաստուէր տիտղոսը շահելու, անոր ինքնաշարժը ունեցաւ խանգարում եւ կեցաւ, ինչ որ առիթ տուաւ անոր անմիջական յաջորդին՝ Շումսխըրի, որ արժանանալ տիտղոսին։ Նշենք, որ 65րդ եւ այս վերջին *լէփի* կիսուն, խանգարումէն ակնթարթ մը առաջ, Հաքինէն ունէր 40 երկվայրկեան լայն

առաւելութիւն։

Շումսխըր մրցումի աւարտին քնդունեց բախտաւորութեան հարցը եւ ըսաւ. «Իրապէս կը ցաւիմ Հաքինէի համար։ Թէեւ երկուքս ալ լաւ մրցում մը ունեցանք, բայց իսկապէս դժուար է վերջին վայրկեանին նման յուսախաբութիւն ապրիլ»։ Իսկ *Ֆեռաքիի թեքնիք* հարցերու պատասխանատու Ռոս Պարուն ըսաւ. «Այսօր մեր բախտաւոր օրն էր»։

Մինչ այդ, երէկուան մրցումին ամէնէն արագ *լէփը* ըրաւ Շումսխըր (1' 21" 151), իսկ մրցումը չաւարտող մեծագոյն անբախտները եղան պրա-

Ստորեւ՝ երէկուան մրցումին արդիւնքները.
1.- Միքայէլ Շումսխըր (Գերմանիա) Ֆեռաքի 1 ժամ 31' 03" 305
2.- Խուան Փալլօ Մոնթոյա (Քոլումպիա) Ուիլիըմ 1 ժամ 31' 43" 043
3.- Ժաք Վիլնէօվ (Քանաւա) ՊԱՐ 1 ժամ 31' 52" 931
4.- Եարնօ Թրուլլի (Իտալիա) Ճորտըն 1 ժամ 31' 54" 558
5.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 1 ժամ 31' 54" 921
6.- Նիք Հայտֆելտ (Գերմանիա) Սաուպըր 1 ժամ 32' 05" 198
Ընդհանուր դասաւորում.

1.- Միքայէլ Շումսխըր (Գերմանիա) Ֆեռաքի 36
2.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 28
3.- Ռուպէն Պարիքելլօ (Պրաչիլ) Ֆեռաքի 14
4.- Ռալֆ Շումսխըր (Գերմանիա) Ուիլիըմս 12
5.- Նիք Հայտֆելտ (Գերմանիա) Սաուպըր 8
6.- Եարնօ Թրուլլի (Իտալիա) Ճորտըն 7
Խումբերու դասաւորում.

1.- Ֆեռաքի 50
2.- Մաքլարըն 32
3.- Ուիլիըմս 18
4.- Ճորտըն 13
5.- Սաուպըր 9
6.- ՊԱՐ 7
7.- Պենթոն 1

ՊԵՏՔ Է ԴԱՍԵՐ ՔԱՂԵՆՔ...

Շարունակուած Ա. ԷջԼԾ

Եթէ Հայաստան կ'ուպէ օգտագործել գոյութիւն ունեցող առիթները», ըսաւ ան։ Սատաքի համաձայն, Հայաստան աւելին պէտք է ընէ հարուստ սփիւռքահայերը ներգրաւելու համար։

Համաշխարհային Դրամաբան ներկայացուցիչը ըսաւ, որ Լեռնային Ղարաբաղի հարցը եւ Արլպէյձանի ու Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումը գործօններ են, որոնք բացասաբար կ'ապդեն ներդրողներու վստահութեան վրայ։ «Երջափակումը կը նշանակէ փոխադրութեան եւ հաղորդակցութեան բարձր ծախսեր եւ քաղաքական անկայութիւններ. այս բոլորը պատճառ կը դառնան ներդրողներու օտարացումին», ըսաւ Սատաք, եպրակացնելով. որ

ԹԲԱԽՍՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՎԵՅԱԺՈՂՈՎԻՆ...

Շարունակուած Ա. ԷջԼԾ

նէրը յստակ որոշումներ որդեգրեն։

Նապարպաւե նշեց, որ թրքախօս վեց անկախ երկիրներու այս միութիւնը ուղղում չէ որեւէ հաստատութեան կամ կողմի դէմ։ «Մեր հիմնական մտահոգութիւնը տնտեսական, մշակութային եւ հոգեւոր գործակցութեան պարզացումն է։ Եթէ մենք սկսիքք քննադատել կամ դատել որեւէ կողմ մը, ապա Թրքական Միութեմէն ոչինչ կը մնայ։ Մենք մեր պարտաւարտութիւնները կ'ուպենք կատարել ՄԱԿի հովանիին տակ եւ կ'ուպենք, որ հարցերը տուժուին նոյն հովանիին տակ, ըսաւ Ղապախստանի նախագահը։

Պոլիսէն Պաքու վերադառնալէ ետք, Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման սկիզբունքներու մասին Հայաստանի Ազգային Ժողովի քաղաքականութեան հրապարակած ուժեղալ յայտարարութեան մասին հարցումի մը պատասխանելով, Ալիեւ ըսաւ, որ երկու եր-

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

ԼԻԾ ԵՈՒՆԱՅԹԸՏ ԲԱՐՁՐԱՅԱԻ ՅՐԴ ԴԻՐՔ

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 35րդ հանգրուանին, Լիծ Եունայթըտ բարձրացաւ 3րդ դիրք, 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Չէլսին։

40 հապար համակիրներու ներկայութեան, Լիծ ունեցաւ լաւ խաղարկութիւն եւ տիրապետեց իր դաշտին վրայ։ Անոր կողերը նշանակեցին Ռոպի Քին եւ Մարք Վիտուրա, մրցումին վերջին 5 վայրկեաններուն։

Լիվըրփուլ Քովենթրիի դաշտին վրայ սուղ յաղթանակ մը տարաւ, 2-0 արդիւնքով։ Կարմիրներուն կոյեւրը նշանակեցին Սամի Հիփիա եւ Կարի Մաքալիսթըրը։

Արսենալ 2-1 արդիւնքով յաղթեց Տերպիի դաշտին վրայ, շնորհիւ Քանուի եւ Փիրէսի նշանակած կոյեւրուն, մինչ հիւրերնկալ կապմին կոլը նշանակեց Էրանիօ։

Ախոյեան Մանչեսթըր Եունայթըտ յաղթական վերադարձաւ Միտլըվպորդին, շնորհիւ Ֆիլ Նելիլի եւ Տէյվիտ Պեքհամի նշանակած կոյեւրուն։

Թոթենհամ - Ասթոն Վիլա ճակատումը աւարտեցաւ ձերմակ հաւասարութեամբ, մինչ Նիւքետը 1-0 արդիւնքով յաղթեց Լայսթրիի։

Չարլթըն - Իփսուիչ՝ մրցումը տեղի կ'ունենայ այսօր։

Ստորեւ՝ արդիւնքները.
Քովենթրի - Լիվըրփուլ 0-2
Տերպի - Արսենալ 1-2
Էվըրթըն - Պրետֆորտ 2-1
Լիծ - Չէլսի 2-0
Մանչեսթըր Սիթի - Ուէսթ Համ 1-0
Միտլըվպորո - Մանչեսթըր Եունայթըտ 0-2
Նիւքետը - Լայսթըր 1-0
Սաութհէմթթըն - Սանտըրլէյտս 0-1
Թոթենհամ - Ասթոն Վիլա 0-0
Չարլթըն - Իփսուիչ՝ այսօր
ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

	Մրցում	Կէտ
1. Մանչեսթըր Եունայթըտ	35	80 (ախոյեան)
2. Արսենալ	35	66
3. Լիծ	35	62
4. Իփսուիչ	35	62
5. Լիվըրփուլ	34	59
18. Մանչեսթըր Սիթի	36	34
19. Քովենթրի	36	33
20. Պրետֆորտ	36	24

ԼԵՎԱՄ

ԱՅՍՕՐ՝ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Այսօր եւ Չորեքշաբթի օր տեղի կ'ունենան ԼԵՎԱՄԻ ֆութպոլի մրցումները, Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի նորակառոյց դաշտին վրայ (Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին ետեւը, դէպի մայրուղի)։

Ստորեւ՝ յայտագիրը.

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ԱՊՐԻԼ 2001

Ժամ

6:00ին Դպրեկանք - Ե. Մանուկեան

7:15ին Ս. Խանամիրեան - Լ. եւ Սոֆիա Յակոբեան

2ՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՄԱՅԻՍ 2001

Ժամ

6:00ին Ճեմարան - Յովակիմեան

7:15ին Մէսրոպեան - Հոփսիսիմեանց

ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԼԾ

բանակի յատուկ միաւորներու հիմամբ։ «Հայ - ռուսական զինուորական զօրամասի ստեղծման պատրաստութեան հարցը կը մօտենի Ռուսիոյ եւ Պիեղո-ռուսիոյ, իբրեւ՝ զինակց պետութեան միջեւ ներկայիս գոյութիւն ունեցող գործակցութեան մակարդակին»։ Ան ըսաւ, որ միացեալ այս զօրամասը զինուորական ուժեղ նկարագիր պիտի չունենայ եւ իր առջեւ յարձակողական հարցեր պիտի չդնէ։

Միւս կողմէ, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան յայտնեց, թէ անվտանգութեան ապահովման ուղղութեամբ Հայաստանի եւ Ռուսիոյ յարաբերութիւնները աւելի բարձր մակարդակի վրայ կը գտնուին, քան՝ Հաւաքական Ապահովութեան Պայմանագիրի միւս երկիրներուն հետ Հայաստանի յարաբերութիւնները։

Ս. Սարգսեանի զննատառուծով, վերջին մէկ տարւան ընթացքին լուրջ յառաջնութեաց արձանագրուած է նաեւ Հաւաքական Ապահովութեան Պայմանագրի մասնակից միւս երկիրներուն հետ յարաբերութեանց մէջ, մասնաւորապէս՝ Հայաստանի կողմէ վաւերացման բոլոր փուլերը անցած զինուորական - արհեստագիտական համագործակցութեան մասին պայմանագիրի պարագային։

Անդրադառնալով հայ - ռուսական շրջանային զինուորական զօրամասին Ս. Սարգսեան յայտնեց, որ զինուորական այս միաւորին հրամանատարը պիտի նշանակէ հայկական կողմը։

Ս. Սարգսեան ըսաւ, թէ զօրամասը պիտի կազմըւի Հայաստանի մէջ տեղակայուած ռուսական ուժերէն եւ Հայաստանի Տրդ զօրաբանակէն. ան պիտի ունենայ մօտաւորապէս 10 հազար զինուոր եւ 100 զրահապատ։

Ս. Սարգսեան հերքեց այն տեղեկութիւնները, թէ հայ - ռուսական յարաբերութիւնները ցրտացումի հանգրուանի մէջ են, միաժամանակ ընդգծելով, որ՝

«չենք կրնար Ռուսիայէն մուրալ ո՛չ քաղաքականապէս եւ ոչ ալ տնտեսապէս։ Գործակցութիւնը երկուստեք շահաբեր պէտք է ըլլայ»։

